

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԸԱՍԱԶԱՅՆ ԲՈՉԱՐԵԱՆ ՆՊԱՏԱԿ ԶՈՒՆԻ ԿԱՐՉԱՊԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանի Չորեքշաբթի, Հոկտեմբեր 3-ին առաջին անգամ ըլլալով արձագանգեց Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի Սեպտեմբեր 21-ի ելույթին, որով ընթացքին նախկին նախագահը իրատ բառերով քննադատած էր երկրի ներկայ իշխանութիւններուն:

Ի պատասխան լրագրողի հարցին, թէ ինչպէս կը վերաբերի Տէր-Պետրոսեանի քաղաքականութիւն վերադարձին, Սերժ Սարգսյան պատասխանեց. - « Իմ խորին համոզմամբ՝ լինի առաջին, երկրորդ, երրորդ թէ քսաներորդ, բոլոր նախկին նախագահները միշտ էլ զբաղուած են քաղաքականութեամբ: Հակառակ պարագայում քաղաքականութիւնը իրենցով կը զբաղուի»:

ՀՀԾ-ի կողմէ ներկայի իշխանութիւններու հասցէին տրուող քաղաքական գնահատականներուն անդրադառնալով վարչապետը

Շաբ.ը էջ 4

ՀԱԿԱՌԱԿ ՆԱԽԿԻՆ ԲԱՐՁՐԱՍՏԻԾԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ՄԻՋԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳՈՆԿՐԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻԸ

Երկուշաբթի, Հոկտեմբեր 1-ին գոնկրէսական Պրատ Շըրմըն տեղեակ պահած է Ամերիկահայ գլխաւոր կազմակերպութիւններու ղեկավարութեանց, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովը յառաջիկայ Չորեքշաբթի, Հոկտեմբեր 10-ին պիտի քննարկէ եւ ապա քուէարկէ Հայկական Ցեղասպանութիւնը հաստատող թիւ 106 բանաձեւը, որով հեղինակն է գոնկրէսական Ատէմ Շիֆ:

Յանձնաժողովի անդամ Պրէտ Շըրմըն յայտնած է որ, եթէ այդ օրը ամէն բան սահուն ընթանայ, վերջին քայլը առնուած կ'ըլլայ՝ ցեղասպանութեան բանաձեւը Ներկայացուցիչներու Տան ընդհանուր ժողովի օրակարգին վրայ դնելու համար:

Մեծամասնութիւն կազմող 226 գոնկրէսականներ արդէն իսկ պատրաստակամութիւն յայտնած են՝ քուէարկելու թիւ 106 բանաձեւի ի նպաստ, իսկ Ներկայացուցիչներու Տան խօսնակ Նէնսի Փլոսի յանձնառու եղած է զայն դնելու քուէարկութեան:

Գոնկրէսի Արտաքին Յարաբերութեանց Յանձնաժողովի այս քայլը կու գայ յաջորդելու նախկին Ցեղասպանութեան նախարարներու կողմէ Նէնսի Փլոսիին ուղղուած երկու նամակներուն, որով անոնք կոչ կ'ընէին Հայկական Ցեղասպանութեան բանաձեւը քուէարկութեան շնորհիւ:

Պետական քարտուղարներու նամակին տակ ստորագրած են Քոլին Փաուըլ, Մատլին Օլպրայթ, Ուորըն Քրիտտֆըր, Լորընս Իկըլլըրկըր, Ճէյմզ Պէյքըր, Ալեքսանտր Չէյկ եւ Հէնրի Քիսինճըր: Անոնք կը յայտնեն թէ, բանաձեւի ընդունումը կրնայ վտանգել տարածաշրջանէն ներս Ամերիկայի ազգային անվտանգութեան շահերը՝ ներառեալ զօրքերը իրաքի եւ Աֆղանստանի մէջ, միաժամանակ վնաս հասցնելով « Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ

հաշտեցման նպաստելու մեր ջանքերուն»:

Փենթակոնի նախկին երեք ղեկավարներու նամակին տակ ստորագրած են Ֆրէնք Քարլուչի, Ուիլիամ Քոնհէն եւ Ուիլիամ Փերրի: Անոնք եւս կ'առաջարկեն թէ, Թուրքիայի Խորհրդարանը հասարակական կարծիքի ճնշումներուն տակ կրնայ սահմանափակել Միացեալ Նահանգներու ներկայութիւնը թրքական «Ինջիրլիք» ռազմակայանէն ներս նոյնիսկ փակել ռազմակայանէն դէպի իրաք ու Աֆղանստան կատարուող թռիչքներու ճանապարհը:

Արձագանգելով նախկին պետական քարտուղարներու նամակին, Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան հրապարակեց յայտարարութիւն մը, ուր կը յայտնուի թէ, արդէն իսկ գրած է խօսնակ Փլոսիին՝ արտայայտելով իր խոր մտահոգութիւնը եւ ցրելով հետեւանքներ:

Շաբ.ը էջ 4

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱՆ ՊԱՀԱՆՁԱԾ Է ՔՆՆԵԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵՋ ՊԱՏԱՀԱԾ ՄԻԼՈՆԱԲՈՐ ՏՈԼԱՐԻ ՀԱՐԱՇԱՀՈՒՄԻ ԴԵՊԵԸ

Բրիտանական «Օպըրվըր» շաբաթաթերթը կը գրէ որ, Մեծն Բրիտանիան պահանջած է Համաշխարհային Դրամատունէն, հետաքննել Հայաստանի մէջ 35 միլիոն տուրք արժողութեամբ ծրագրի մը հետ կապուած կաշառակերութեան եւ չարաշահումներու մասին մեղադրանքները:

Ըստ հեղինակաւոր թերթին, բրիտանացի մասնագէտ Պրիւս Թասթըր յայտնած է, թէ ապացոյցներ ներկայացուցած է Դրամատան, որ Երեւանի ջրամատակարարման բարելւման նպատակով ծրագրի իրականացման ժամանակ թող տրուած են լուրջ խախտումներ, սակայն միջեւ օրս Դրամատունը այդ կապակցութեամբ

Շաբ.ը էջ 5

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ամենայն Հայոց հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս, նախատեսուած ծրագրի համաձայն իր հովուապետական Յրդ այցելութիւնն սկսած է եւ քանի մը օրէ ի վեր կը գտնուի Լոս Անճելոս:

Վեհափառի գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմեն Ռուսաստանի Դաշնութեան եւ Նոր Նախիջևեանի առաջնորդ՝ Գերշ. Տ. Եզրաս Եպս. Ներսիսեան, Մայր Աթոռի դիւանապետ՝ Գերշ. Արշակ Եպս. Խաչատուրեան, գաւազանակիր՝ Հոգշ. Յովնան Աբելայ Յակոբեան, Ս. Յովնան Աբելայ Յակոբեան եւ թարգմանիչ Արթ. Տ. Կորիճ Քհնյ. Տէվէճեան եւ Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստաժամի նկարահան՝ Սուրէն Տէր Գրիգորեան: Գարեգին Բ. Կաթողիկոսի շքախումբին մաս կը կազմէ նաեւ ԱՄՆի Արեւելեան Թեմի Առաջնորդ եւ գլխաւոր հիւրընկալ Գերշ.

Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Երկուշաբթի, Հոկտեմբեր 1-ին, Ամենայն Հայոց Հայրապետը՝ Պրպէնքի Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ հանդիպում ունեցաւ Լոս Անճելոսի եւ մերձակայ քաղաքներու հայկական վարժարաններու բարձրագոյն կարգի աշակերտութեան հետ անոնց, փոխանցելով իր հայրապետական օրհնութիւններն ու յորդորները:

ՕԾՈՒՄ Ս.
 ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
 ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ԱԻԱԳ ԽՈՐԱՆԻՆ

Նոյն օրը՝ երեկոյեան ժամը 6ին, Ամենայն Հայոց Հայրապետը «Հրաշափառ» երգով եւ շուրջ 30 եկեղեցականներու առաջնորդութեամբ, հանդիսաւոր կերպով մուտք գործեց Փասատինայի նորակառուց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն ներս: Խուռներամ բազմութեան մէջ կը նշմարուէին սէնաթոր ձէք Սքաթ, Հայ



Photo by Karin Bekarian

Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս

Կաթողիկէ Համայնքի առաջնորդ Գերշ. Հայր Անտոն Սարոյեան, Հայաստանի Հիւպատոսարանի պատուիրակութիւն գլխաւորութեամբ

Շաբ.ը էջ 8

ՄԱՀԱԶԴ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը խորացում կը գտնուի Կեդրոնական վարչութեան մասին անդամ, Կուսակցութեան Հայկ. Երջանի երկարամեայ ղեկավար եւ ազգային ու հասարակական վաստակաշատ գործիչ՝

ԸՆԿ. ԾՈՐԵ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Սեպտեմբեր 29 2007-ին Հայկ. Երջանի մէջ:

Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական վարչութիւն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԳԼՈՒԽ ԳՈՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ռոբերդ Քոչարեանի արձագանքը ՀՀ առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի յայտնի ելույթին պարզապէս ցնցող էր:

Պարզուած է, որ երկրի գործող նախագահի պատկերացումներով երկրի գործադրումը որոշուած է նրանով, թէ քանի փողոց է լուսաւորուած: Այլ կերպ ասած, եթէ Երեւանում մէկ բնակչի հաշուով այնքան փողոց լուսաւորուելի, որ քան, ասենք, Ուաշինգտոնում, ապա Հայաստանը պէտք է ներառուի աշխարհի ամենագործադրութեան երկրների եօթնեակում: Բայց սա պատկերացումների ինդիք է:

Այլ հարց է թիւր: Սա չափազանց ճշգրիտ կատեգորիա է: Քոչարեանը յայտարարեց, թէ ինքը որպէս ժառանգութիւն ստացել է 300 մլն դոլարանոց բիւջէ, իսկ յաջորդ տարի Հայաստանը կ'ունենայ 2,5 մլրդ դոլարանոց բիւջէ, եւ այդ բիւջէն 8 անգամ մեծ կը լինի իր ժառանգութիւն ստացած բիւջէից:

Հիմա մի քիչ ուսումնասիրենք այս թիւերը: Նախ, եթէ խօսուած ենք ճշգրիտ կատեգորիաների մասին, ապա այդ 2,5 մլրդ դոլարանոց բիւջէն դեռ պէտք է կազմել, այն պէտք է ներկայացնել ԱԺ, ԱԺ-ն այն պէտք է ընդունի որպէս օրէնք, եւ վերջապէս, այն դեռ պէտք է կատարել: Իհարկէ, կարելի է կուսակց, թէ ինչպէս է ստացուելու այդ 2,5 մլրդ դոլարը, բայց քանի դեռ այն չկայ, պէտք է ուսումնասիրել այն, ինչ կայ: Այսինքն՝ կ'ուսումնասիրենք այս տարուայ բիւջէն եւ այն կը համեմատենք Քոչարեանի ժառանգութիւն ստացած բիւջէի հետ:

Քոչարեանը նախագահ է դարձել 1998-ին եւ, բնականաբար, ժա-

լիբղենն են: 1998 թուականի Փետրուարին, երբ Քոչարեանը բիւջէ էր ժառանգում, պղնձի մէկ տոննայի միջազգային գինը եղել է հազար 664 դոլար: Այս տարուայ Յունիսին մէկ տոննա պղնձի միջազգային գինը կազմել է 7 հազար 475 դոլար: Գինը աճել է ուղիղ 4,5 անգամ: Հետեւաբար պղնձի արտահանումից մեր բիւջէն այս տարի կը ստանայ 4,5 անգամ շատ գումար, քան 1998 թուականին: Մոլիբդենի գինը 9 հազար 452 դոլարից դարձել է 71 հազար դոլար, աճը՝ 7,5 անգամ: Մոտաւորապէս այդքան էլ պէտք է կազմի բիւջէի եկամուտի աճը այս բիզնեսից:

Բիւջէի եկամուտների աճի յաջորդ աղբիւրը, իհարկէ, էլեկտրաէներգիան է: Խնդիրն այն է, որ մինչեւ Ռոբերդ Քոչարեանը Հայաստանում մանրածախ էլէկտրաէներգիայի սակագինը 15 դրամ էր, որի 20 տոկոսը աւելացուած արժէքի հարկն էր: Քոչարեանի օրօք սակագինը հասցուեց 25 դրամի, հետեւաբար բիւջէ գնացող աւելացուած արժէքի հարկը միայն սակագինը բարձրացնելու շնորհիւ մեծացաւ աւելի քան 60 տոկոսով: Հենց Քոչարեանի օրօք Հայաստանում աւելացուած արժէքի հարկով սկսեց հարկուել հացը: Այսինքն, եթէ նախկինում մենք խանութում հաց էինք գնում, եւ մեր վճարած գումարից պետական բիւջէն ոչինչ էր ստանում, ապա Քոչարեանի օրօք մենք հացի դիմաց սկսեցինք վճարել ուղիղ 20 տոկոս աւելի գումար, որը ուղղակիօրէն նախատեսուած էր բիւջէ գնալու համար: Դե, հիմա ինքներդ մօտաւոր հաշուէք, թէ 3 մլն մարդ

ԿՈՒՏԱԿՈՒՄ Է ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՄՊԱՍԱՐԿԵԼՈՒ ՓՈՂԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հայաստանի տնտեսութիւնը ապրում է տոտալ թանկացումների հերթական փուլը: Թանկանում է գրեթէ ամէն ինչ, ընդ որում թանկանում է բաւական զգալիօրէն: Տրամաբանութիւնը չուշուած է, որ այս շրջանում, երբ նախագահի ընտրութեանը մնացել է 5 ամսից էլ պակաս ժամանակ, տրամաբանուած չեն այդ թանկացումները,

եւլ դէպքում ամենայն հաւանականութեամբ Սերժ Սարգսեանը, ով երեւի թէ իր մտահոգութիւնը կ'արտայայտի գնաճի կապակցութեամբ եւ կասի, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ գնաճի մէջ արհեստական միտումները պարզելու եւ դրանք կանխելու ուղղութեամբ: Այդ միջոցառումները շատ արագ կը ձեռնարկուեն եւ նախագահի ընտրութիւնից մէկ,

ԲՈՂՈՐԻՆ Է ԵՎԵՆԻ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՆԵՍՈՒԹԵԱՆ ԳՐԵՔԷ ԲՈՂՈՐ ԳԻՂԵՐԸ ՄՈՆՈՍԿՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒԾ Է ՄԻ ԲԱՆԻ ԽՈՉՈՐ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՆ

քանի որ դրանք կարող են մեծացնել հասարակութեան սոցիալական դժգոհութեան աստիճանը: Սակայն իրականում, ըստ ամենայնի, տեղի է ունենում բաւական լաւ մտածուած ու հաշուարկուած մի կոմբինացիա: Բոլորին է յայտնի, որ Հայաստանի տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերը մոնոպոլացուած են: Այսինքն տնտեսութիւնը բաժանուած է մի քանի խոշոր գործարարների միջեւ: Այդ գործարարների ուսերին է ընկնում նաեւ նախընտրական ժամանակահատուածի ծախսը, որ կատարուած է իշխանութեան թեկնածուի քարոզչութեան համար: Ներկայիս ժամանակահատուածի առանձնապատկերիւնն այն է, որ նախագահի ընտրութիւնը տեղի է ունենում խորհրդարանի ընտրութիւնից շատ կարճ ժամանակահատուած անց: Իսկ խորհրդարանի ընտրութեանն այդ գործարարները ծախսել են թէ իշխանութեան եւ թէ կոնկրետ իրենց ընտրական նպատակների համար: Այսինքն, նրանք մի քանի տասնեակ, իսկ գուցէ հարիւր միլիոն դոլար են ծախսել այն դէպքում, երբ մի քանի ամիս անց նոյն այդ ծախսի անհրաժեշտութեան առաջ են: Այսինքն նրանք ունեն մի քանի ամիս ժամանակ ծախսը հետ բերելու, եւ նաեւ նոր ծախսի համար բաւարար պաշար կուտակելու համար: Այլ կերպ ասած, ներկայումս հանրութիւնը, սպառողը, հարստահարուած է կրկնակի՝ անցեալի եւ ապագայի համար: Այդ հարստահարումը պէտք է շարունակել մինչեւ Դեկտեմբեր, որովհետեւ Յունուարին ամենայն հաւանականութեամբ շուկայում կը տրուի հակառակ հրաման՝ գնալ գների որոշակի էջանացում: Երբ նախընտրական իշխանական ֆոնդը կը լինի բաւականաչափ կուտակուած, իշխանութիւնն արդէն կ'անցնի պոպուլիստական ռեժիմին: Նման մի բան տեղի ունեցաւ անցեալ տարի: Դեկտեմբերին անհասկանալի ու անտրամաբանական թանկացումներ, որոնցով յանկարծ սկսուած է զբաղուել տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնաժողովը: Յունուարից սկսած գները որոշակիօրէն կայունանում են եւ տեղ-տեղ նուազում: Բայց խոշոր բիզնեսն արդէն հասցրել էր կուտակել խորհրդարանի ընտրութիւնը սպասարկելու փողը:

մէկուկէս ամիս առաջ տեղի կ'ունենայ գների նուազում, այն հաշուարկով, որ սպառողը, որը մէկուկէս ամիս անց վերածուելու է ընտրողի, կը գնահատի իշխանութեան այդ ջանքը: Ի դէպ, կարելի է ենթադրել, որ նոյն բանը տեղի է ունենալու նաեւ դոլարի փոխարժէքի հետ: Դէպի նոր տարի այն երեւի թէ կը սկսի նուազել, դրամը կ'արժեւորուի, իսկ նոր տարուայ յետոյ կը սկսի դոլարի արժեւորման որոշակի գործընթաց, երբ արդէն օլիգարխիան բնակչութեան ձեռքից էջանով հաւաքած կը լինի այնքան դոլար, որ կը բաւականացնի արդէն միանգամից երկու նախագահի ընտրութիւն կատարելու համար: Դէ իսկ այն, ինչ գների հետ կը կատարուի նախագահի ընտրութիւնից յետոյ չորս տարիների ընթացքում, մինչեւ որ կը գայ նոր համապետական ընտրութեան ժամանակը, թերեւս պէտք է այժմ փորձել պատկերացնել անգամ, երկրին դեմոկրատիական հարուած չհասցնելու համար:

ՋէՅՄՍ ՅԱԿՈՒԲԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

Այսօր մեր պետական բիւջէն պէտք է լինէր ոչ թէ 1,5 մլրդ դոլար, այլ մի 5-6 մլրդ, իսկ յաջորդ տարուայ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի կանխատեսած բիւջէն՝ մի 7-8 մլրդ

ուանգութիւն է ստացել դեռ 1997 թուականի Դեկտեմբերի 30-ին ընդունուած բիւջէն: Այդ բիւջէի ծախսային մասը կազմել է 211 մլրդ դրամ («ՀՀ գործող օրէնքների ժողովածու (1995-1999թթ.) Գիրք Բ», էջ 343, տող 10), որը, ի հեճուկս Քոչարեանի, ոչ թէ 300 մլն դոլար է եղել, այլ 420 մլն: Այս տարուայ բիւջէի ծախսային մասը կազմում է 558,6 մլրդ դրամ (ՀՀ պաշտօնական տեղեկագիր, N 65 (520) 22 դեկտեմբերի 2006, էջ 3): Այս թիւը վերածելով դոլարի՝ կ'ստանանք 1 մլրդ 590 մլն դոլար: Այսինքն, ստեղծելով դէպքում, ժառանգութիւն ստացած բիւջէից այս տարուայ բիւջէն մեծ է ընդամենը 3,7 անգամ, եթէ հաշուում ենք դոլարով: Բայց քանի որ դոլարը այս ընթացքում Հայաստանում արժեւորուել է, ապա կը ստացուի, որ Քոչարեանի ժառանգած բիւջէից այսօրուայ բիւջէն մեծ է ընդամենը 2,6 անգամ:

տարեկան քանի հաց է գնում, եւ իւրաքանչիւր հացից գնի 20 տոկոսը գնում է բիւջէ:

Մինչ Քոչարեանը Հայաստանում հարկերից ազատուած էր նաեւ դիզվառելիքը, եւ դա արուել էր այն նկատառումով, որ դիզվառելիքի հիմնական սպառողը գիւղատնտեսութիւնն է՝ ՀՀ բնակչութեան կերակրողը: Քոչարեանի օրօք այն եւս սկսեցին հարկել, ու գումարները գնացին բիւջէ, իհարկէ՝ նոյն չափով դիզվառելիքի գնի աճի հաշուին: Թէ՛ ցորենի եւ թէ՛ դիզվառելիքի գների շեշտակի աճը լրացուցիչ մոտեքեր ապահովեցին բիւջէի համար, բայց այդ գումարները դուրս եկան մեր գրպաններից: Էլ չենք թուարկում այն բազմաթիւ ու բազմատեսակ ապրանքների, ներառելով՝ սննդամթերքի եւ դեղորայքի գների շեշտակի աճը, ինչը հանգեցրեց դրանցից բիւջէ գանձուող աւելացումը արժէքի հարկի ծաւալների համարժէք մեծացմանը:

Սա էլ է մեծ թիւ, եւ առաջին հայեացքից կարելի է հպարտանալ, որ պատերազմից նոր-նոր դուրս եկած երկրի 420 միլիոնանոց բիւջէն հետագայ 9 խաղաղ տարիների ընթացքում մեծացուել է 2,6 անգամ: Բայց սա՛ միայն առաջին հայեացքից: Եթէ հաշուի առնենք, թէ որոնք են այդ մեծացման պատճառները, կարող է ոչ թէ հպարտանալու առիթ չմնայ, այլ նոյնիսկ ամաչելու ինդիք ծագի:

Օրինակները կարելի է շարունակել շատ երկար, ու եթէ դրանց տանք թուային տեսք, ապա կարող է ստացուել, որ այսօր մեր պետական բիւջէն պէտք է լինէր ոչ թէ 1,5 մլրդ դոլար, այլ մի 5-6 մլրդ, իսկ յաջորդ տարուայ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի կանխատեսած բիւջէն՝ մի 7-8 մլրդ: Այնպէս որ, գլուխ գովելուց առաջ աւելի լաւ է նախ մի քանի թիւ գումարել-հանել, յետոյ մտածել՝ գուցէ չարժէ գլուխ գովել:

ՀԱՅԿ ԳԵՈՐԳԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱԳԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).

All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ՎԱՐՎԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆ ԱՊՐՈՒՄ Է ՎԱՐԴԱԳՈՅՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ներկայիս ուժեղ մի պարագայում Հայաստանում փակուել է ՍԻՄ-ը, որ օրինական չի կարողանում գործել, փակուել է «Իրաւունքը», «Զարուհի», «Արարատ-ինֆոմո», «Հետաքննութիւն» թերթերը: Ես եւ Յովհաննէս Գալաթեանը եմ թարկուել ենք հետապնդումների, հալածանքների», ասաց «Սահմանադրական իրաւունք» Միութեան նախագահ, «Իրաւունք», «Իսկական իրաւունք» թերթերի խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանեանը, որը համաձայն չէ ՀՀ Ազգային ժողովի փոխիստանակ, ՀՅԴ բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանի հետ, թէ ի տարբերութիւն նախորդների, այս իշխանութիւնների օրօք թերթեր, կուսակցութիւնները չեն փակուել, քաղաքական հայեանքները համար մարդիկ չեն հետապնդուել:



Հայկ Բաբուխանեան

Հատ վարդագոյն պատկերացումներով, այլապէս նման բան չէր ասի. «Կարող է շատ մեղադրանքներ առաջարկել, մենք իրենից շատ ենք քննադատել այդ իշխանութիւններին, երբ նրանք իշխանութեան գլուխ էին, բայց պէտք է համարձակութիւն ունենայ քննադատել իշխանութիւններին այն ժամանակ, երբ նրանք իշխանութեան գլուխ են»:

Հայկ Բաբուխանեանը Վահան Յովհաննիսեանին յիշեցրեց նաեւ այս իշխանութիւնների օրօք «Ա1+»-ի փակման դէպքը՝ խորհուրդ տալով չասել, թէ նման բան չկայ: Բաբուխանեանի կարծիքով՝ Վահան Յովհաննիսեանը ապրում է

ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԵՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՍԴՀԿ «Սարգիս Տիրուհի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւն», ՀՀԵ Երիտասարդական միութիւն եւ ՀԺԿ Երիտասարդական Խորհուրդը համատեղ պայքարելու համատեղ յայտարարութեամբ են հանդէս եկել: Իսկ պայքարելու են «հանրապետականացման պրոցէսի դէմ»:

ցին ՀՀԿ- շարքերը, -ասում է յայտարարութեան մէջ, - Պէտք է փաստել, որ այս ամէնը կատարում է ստիպողաբար, որովհետեւ ուսանողական խորհրդների ակտիվիստները ունեն մի քանի լուրջ խնդիրներ՝ ապիրատուար, աշխատանք, կարմիր դիպլոմ, որոնք կարող են լուծել միայն «ցեղակրօնութիւնը» ընդունելուց յետոյ»:

«Նախագահական ընտրութիւններից առաջ Հայաստանում գործող բոլոր բուհերում սկսուել է ուսանողական խորհրդների հանրապետականացման պրոցէս: Նման նախադէպ արդէն գրանցուել էր խորհրդարանական ընտրութիւններից առաջ, երբ մի խումբ ուսխորհրդարանականներ համալրե-

«Վստահեցնում ենք, որ վճռականորէն պայքարելու ենք այս երեւոյթի դէմ եւ կոչ ենք անում ուսանողական խորհուրդներին զբաղուել իրենց իրական գործառոյթներով: Այլապէս իրենց գոյութիւնն ուղղակի դառնում է անիմաստ», - ասում է յայտարարութեան վերջում:

ԿԱՐԱՊԵՏԻՉԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ, ԲԱՅՑ ԿԸ ՅԱՂԹԻ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ժողովրդական կուսակցութեան նախագահ Տիրգրան Կարապետեանը մասնակցելու է 2008թ-ի նախագահի ընտրութիւններին եւ, իր կարծիքով, ի տարբերութիւնն միւս բոլոր թեկնածուների՝ ունի լուրջ առաւելութիւն. «Ես առաջադրուելու եմ իբրեւէ չէզոք թեկնածու: Մենք ուզում ենք խաղի մէջ լինել: Ես այն միակ թեկնածուն եմ, որ պարզ ճակատով կարող եմ ասել. ես՝ սա եմ»:



Տիրգրան Կարապետեան

«Տէր-Պետրոսեանը խելացի մարդ է: Նա հենց այնպէս ելոյթ չէր ունենայ: Եթէ նա առաջադրուի, հետ քաշուելը շատ դժուար կը լինի: Տէր-Պետրոսեանի հետեւից կը գնան նրա կողմնակիցները եւ թոյլ չեն տայ, որ նա հետ դառնայ: Նրանք միայն Տէր-Պետրոսեանին վերադարձի մէջ են տեսնում առաջընթաց»:

Տիրգրան Կարապետիչը գիտի, որ 2008թ.-ին չի դառնայ ՀՀ նախագահ, սակայն չի ուզում հիասթափեցնել իր ընտրազանգուածին եւ մասնակցելու է: Բացի իր առաջադրուելուց՝ այսօր նա «Ա1+»-ին ներկայացրեց ընտրական գործընթացների հնարաւոր զարգացումները:

Տիրգրան Կարապետիչը . ընտրութիւններին մասնակցելու է, սակայն այսօր իսկ արդէն «Ա1+ին վստահեցրեց, որ նախագահ է դառնալու Սերժ Սարգսեանը: Իսկ թէ ինչպէ՞ս՝ Սարգիս Տիրգրան Կարապետիչն ասաց. «Կ'ընտրուի այնպէս, ինչպէս մինչ այս էին ընտրուում»:

«Այն թեկնածուները, որոնք կը լինեն, իրենք Սերժ Սարգսեանի հետ աւելի լաւ են լեզու գտնում, քան թէ Ռոբերդ Քոչարեանի, որովհետեւ Սերժ Սարգսեանի հետ աշխատել են, մտերիմ են: Օրինակ, թէ՛ համեմատութեան մէջ վերցնենք, Լեւոն Տէր-Պետրոսեանը Սերժ Սարգսեանի հետ աւելի մտերիմ է, քան՝ Ռոբերդ Քոչարեանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՐՑ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Սեպտեմբեր 29-ին Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը նախկին արտգործնախարար, Հայոց Համազգային Շարժման անդամ Ալեքսանդր Արզումանեանի հետ միասին այցելել է Հայ Յեղափոխական դաշնակցութեան «Միմոն Վրացեան» կենտրոն եւ մօտ 40 րոպէ գրուցել Դաշնակցութեան բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի եւ գերագոյն մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանի հետ: Հանդիպումից յետոյ Հրանդ Մարգարեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ վերջին 14 տարուայ ընթացքում սա առաջին հանդիպումն էր, եւ կարեւորը հենց հանդիպման փաստն էր:

տատելու նպատակով: «Կարծում եմ, որ այցի նպատակը հենց այցի մէջ էր, այցը կատարելու մէջ էր: Բայց, իմիջիակաց, նաեւ պայմանաւորուեցինք մնալ քաղաքական-գաղափարական պայքարի մակարդակի վրայ եւ չիջնել այդ մակարդակից», - ասաց Հրանդ Մարգարեանը: - «Հանդիպման առաջարկի ընդունումը մեր կողմից կարեւոր էր այն առումով, որ մենք եւս, մեր հերթին, անձնական օրինակ ցոյց տալու խնդիր ունէինք՝ երկրում համերաշխութեան, հանդուրժողականութեան մթնոլորտ ստեղծելու, քաղաքական մշակոյթ ձեւաւորելու»:

«Այսինքն, ձեր հանդիպման ընթացքում Լեւոն Տէր-Պետրոսեանը բացէիբաց ասաց, որ առաջադրելու է իր թեկնածութիւնը, եւ պայմանաւորուել էք, որ քաղաքակիրթ պայքար էք մղելու իրար հետ», - այս հարցին Հրանդ Մարգարեանը պատասխանեց. - «Իր ասածը այն էր, որ լրջօրէն մտադիր է դնել իր թեկնածութիւնը, բայց դեռ վերջնական որոշում չի կայացրել»:

Դաշնակցութեան բիւրոյի ներկայացուցիչը յայտնեց, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ պայմանաւորուել են առաջիկայ ընտրութիւնների ժամանակ քաղաքակիրթ պայքար մղել, գերծ մնալ ցեխարձակումներից, պայքարի դաշտում պահպանել խաղի որոշ կանոններ՝ երկրում քաղաքական մշակոյթ հաս-

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՊԵՏՔ Է ԲԵՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանն Սեպտեմբեր 28-ին ընդունել է ՀՀ արտաքին գործերի նախարարութեան կենտրոնական ապարատի եւ արտերկրում հաւատարմագրուած ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւնների ու հիւպատոսական հիմնարկների ղեկավարներին, որոնք Երեւանում են գտնուում ամենամեայ հաւաքի առիթով:

սուհետ աւելի նպատակային ու ակտիվ գործունէութիւն ծաւալելը: Սերժ Սարգսեանը նշել է դեսպանութիւնների կողմից որոշակի ծրագրերի, նոր նախաձեռնութիւնների ներկայացման անհրաժեշտութիւնը:

Հանդիպման ժամանակ վարչապետը նշել է, որ խորհրդարանական ընտրութիւնների յաջող անցկացումից յետոյ, լաւ հնարաւորութիւններ են բացուել արտերկրում մեր երկիրը լաւագոյնս ներկայացնելու եւ շահեկան պայմաններ ստեղծելու համար:

Վարչապետը վստահեցրել է, որ կառավարութիւնն անում է հնարաւորը՝ արտերկրում մեր դիւանագիտական ներկայացուցչութիւնների համար աշխատանքային բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ ընդգծելով, որ ՀՀ արտաքին գործերի նախարարութեան կողմից 2008թ. համար արուած գրեթէ բոլոր առաջարկութիւնները հաշուի են առնուել եւ արտացոլուած են ՀՀ պետական բիւջէի նախագծում:

Կառավարութեան ղեկավարը դիւանագէտների ուշադրութիւնն է հրաւիրել երկու կարեւոր խնդրի վրայ՝ այլ պետութիւններում ՀՀ քաղաքացիների իրաւունքների ու հայկական ընկերութիւնների շահերի պաշտպանութեան ուղղութեամբ աշխատանքի ակտիւացումը եւ տնտեսական հարցերով այ-

«Ըստ այդմ, մեծ են նաեւ իրականացուելիք աշխատանքից կառավարութեան ակնկալիքները», - նշել է վարչապետը, - յաւելելով, որ իհարկէ, բոլոր խնդիրները միայն գամից չեն կարող լուծուել, սակայն երկրի տնտեսական աճին համընթաց, առաջնահերթ հարցերը լուծում կը ստանան:

ՀԱՆՏԱՆՔՆԵՐԸ ԹԱՓ ԵՆ ԱՌՆՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հերթական անգամ ներքաղաքական վճռորոշ զարգացումների հանգրուանում թափ են առնում քաղաքական հալածանքների տարաբնոյթ դրսեւորումները», - Ժիրայր Սեֆիրեանի, Վարդան Մալխասեանի եւ Վահան Արոյանի նկատմամբ Սեպտեմբերի 25-ին կայացուած մեղադրական դատավճռին յայտարարութեամբ է արձագանքել «Ժառանգութիւն» կուսակցութիւնը:

ցոյցն է, քանի որ սեփական կարծիքն արտայայտելու համար մարդկանց ազատագրկման մէջ պահելը յարիր չէ ժողովրդավարութեան սկզբունքներին: Այսօրինակ դատավճիռները ոչ միայն ամօթալի են հայ ժողովրդի համար, այլեւ լրջօրէն վնասում են մեր երկրի միջազգային հեղինակութեանը, - ասում է յայտարարութեան մէջ, - Բարոյական առումով այն դատավճիռ է հենց հայրենի դատական իշխանութիւններին:

Ըստ յայտարարութեան՝ այս դատավճիռը վերստին փաստում է, որ դատական իշխանութեան իրականացման քողի ներքոյ սահմանափակում են խօսքի ու քաղաքացիական ազատութիւնները:

«Մտաւայմտական անպարկէշտութիւնը, որով ներթափանցուած է դատավճիռը, Հայաստանում տիրող ավտորիտարութեան վառ ապա-

Դրանով ազգի նուիրեալների ապօրինի դատապարտումը դառնում է ողջ հասարակութեան խնդիրը, նրա քաղաքացիական հասունութեան վկայագիրը: Իրաւական կամայականութիւններն են, որ զնաւում մեծացնում են ժողովուրդը իշխանութիւն վիճը, իրապէս սպառնում երկրի անվտանգութեանը»:

ԼՈՒՐԵՐ

ՔՈՉԱՐԵԱՆՆ ՈՒ ՕՍԿԱՆԵԱՆԸ ԽՈՍՏԱՑԵԼ ԵՆ ՅԱՆՁՆԵԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Եթէ պարոնայք Քոչարեանն ու Օսկանեանը բացառաբար յայտարարեն այն, ինչի մասին նրանք արդէն ներքին համաձայնութեան են եկել, այսինքն՝ պատրաստ են յանձնել տարածքները, եթէ իրենց տրուեն անվտանգութեան եւ ինքնիշխանութեան երաշխիքներ: Դա հիմնովին կը փոխի բանակցային գործընթացը եւ Ատրպէյճանում առկայ տրամադրութիւնները: Տպաւորութիւնն այն է, որ բանախօսները լուրջ չեն, քանի որ նրանք իրենց հանրութիւններին չեն ասում իրենց իրական մտադրութիւնները մասին»,- Հոկտեմբեր 1-ին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատանը յայտարարեց բրիտանացի լրագրող Թոմաս Տէ Վալը:



Բրիտանացի լրագրող Թոմաս Տէ Վալ

Դեսպանատունը եւ Պատերազմի եւ խաղաղութեան լուսաբանման ինստիտուտի Հայաստանեան մասնաճիւղը /IWPR/ այսօր կազմակերպել էին Դե Վալի «Սեւ աչքի: Հայաստանն ու Ատրպէյճանը խաղաղութեան ու պատերազմի միջեւ» գրքի հայերէն թարգմանութեան շնորհանդէս-քննարկումը: Գրքի անվերջն եւ ուսերէն տարբերակները լոյս են տեսել 2004թ եւ 2006թ.-ին եւ բաւականին լուրջ քննադատութեան արժանացել թէ ՀՀ-ում եւ թէ Ատրպէյճանում:

ՀՀ նախագահի եւ ԱԳ նախարարի վերաբերեալ Թոմ Տէ Վալի յայտարարութիւնը իսկապէս հետաքրքիր էր, քանի որ Քոչարեանն ու Օսկանեանը երբեք չեն յայտարարում, որ բացի Լաչինից՝ պատրաստ են յանձնել ազատագրուած բոլոր տարածքները:

Դուք վստահ էք, որ Քոչարեանն ու Օսկանեանը արդէն պայմանաւորութեան են ձեռք բերել տարածքները վերադարձնելու մասին. «Այո»-ի հարցին՝ Թոմ Տէ Վալը պատասխանեց. «Իհարկէ, այդ պայմանագրում ոչինչ վերջնականապէս համաձայնեցուած չէ, քանի որ ես ամէն ինչ համաձայնեցուած չէ:

«Գաղտնիք չէ, որ հայկական կողմը պատրաստ է յանձնել տարածքները՝ հետեւեալ պայմանների

դիմաց՝ ԼՂՀ կարգավիճակ, անվտանգութեան երաշխիքներ եւ կապ Հայաստանի հետ՝ Լաչինով: Եթէ նայենք վերջին 4-5 խաղաղ կարգաւորման պայմանագրերին, ապա յստակ երեւում է, որ հայկական կողմը պատրաստ է յանձնել չորս, հինգ, վեց, վեց ու կէս այսպէս կոչուած, գրաւեալ տարածքները: Միւս կողմից՝ նոյն Ատրպէյճանի նախագահը Ստեփանակերտը անուանում է Խանկենդի եւ ասում, թէ ինչպէս է այնտեղ պատրաստում նշել Նովրուզը եւ ասում, որ ԼՂՀ-ին պատրաստ է տալ բարձր ինքնավարութիւն՝ իր դրոշով եւ ուժային կառուցներով: Եթէ երկու նախագահները ասեն, թէ իրականում ինչի շուրջ են համաձայնութեան եկել եւ մասսայական քննարկման առարկայ դարձնեն՝ կը նպաստեն խնդրի կարգաւորմանը»:

Թոմ Դե Վալի կարծիքով՝ Ռոբերտ Քոչարեանը չի յայտարարում իր համաձայնութեան մասին, քանի որ վախենում է արժանանալ Լեւոն Տէր-Պետրոսեանի ճակատագրին. «Քոչարեանը վախենում է, որ եթէ նա Տէր-Պետրոսեանի պէս յայտարարի, թէ պատրաստ է գնալ փոխզինումների, ընդդիմութեանը ուժ կը տայ՝ իշխանութեան գալու համար: Իսկ Իլհամ Ալիևը նման խնդիր չունի: Նա Ատրպէյճանում իրեն շատ լաւ է զգում եւ նրա կարողութիւնները հասնում են միլիարդների»:

ՖԵՐՅԻՅԷ ԶԵԹԻՆ. «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂԱՐԿԵԼ Է ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ոստիկանութիւնը քողարկել է իսթանպուլի «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութեան հանգամանքները՝ թաքցնելով եւ վերացնելով ապացույցներ: Այդ մասին յայտարարել է Դինքի ընտանիքի փաստաբան Ֆեթիյէ Զեթինը:

«Քննութիւնից թաքցում են ապացույցներ եւ տեղեկատուութիւն: Բազմաթիւ ապացույցներ վերացուել եւ կորսուել են», - ասել է Զեթինը թուրքական «Ռադիկալ» թերթին տուած հարցազրոյցում:

Փաստաբանի խօսքերով, մասնաւորապէս, Յունուարի 19-ին տեղի ունեցած սպանութեան ժամանակ «Ակոս»-ի խմբագրատանը մօտ գտնուող բանկի անվտանգութեան տեսախցիկի նկարահանած կադրերը, որոնք ձայնագրել էին նաեւ երկու գլխաւոր կասկածեալների հեռախօսազրոյցը, անհետացել էին, երբ դրանք վերցրել է ոստիկանութիւնը, իսկ այդ մասին քննիչների տեղեկանալուց յետոյ ինքը նրանց փոխանցուել է ոչ ամբողջութեամբ:

«Ինչ-որ բան քողարկուած է, գուցէ՝ որոշակի կապեր կասկածեալների եւ անվտանգութեան ուժերի ներկայացուցիչների միջեւ», - ասել է փաստաբանը՝ յաւելելով:

- «Բացառապէս են մարդասպանը եւ նրա մերձակոր շրջապատը, սակայն ոչ իրական ոճրագործները»:

«Ֆրանսալը» գործակալութեան վկայութեամբ, Զեթինն ընդգծել է, որ թէեւ թուրքական կառավարութիւնը անմիջապէս արձագանքեց Դինքի սպանութեանը, այդուհանդերձ, քննութեան ընթացքին զուգահեռ նրա վճռակալութիւնը մարում է:

«Դեռ ուշ չէ: Եթէ կառավարութիւնը վճռակալութիւն ցուցաբերի, սպանութեան վրայ կարող է լոյս սփռուել», - ամփոփել է Դինքի ընտանիքի փաստաբանը:

Միաժամանակ, «Ատշիէյթըտ Փրես» գործակալութեան փոխանցմամբ, շաբաթ օրը թուրքական NTV մասնաւոր հեռուստաալիքով հեռարձակուել է Դինքի սպանութեան գործով կասկածեալներից մէկի եւ ոստիկանութեան մի պաշտօնակցի հեռախօսազրոյցի ձայնագրութիւնը, որից հասկացուած է, որ տուեալ պաշտօնեան տեղեկ էր լրագրողի նախապատրաստուող սպանութեանը:

Դինքի սպանութիւնից քիչ անց տեղի ունեցած այդ հեռախօսազրոյցի սղագրութիւնը կցուել է գործի նիւթերին:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԾ Է ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄԵՆԸ ԵՎ ԳՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄԵՆԸ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Եւրախորհրդարանի պատգամաւորները 236 փոփոխութիւն են առաջարկել Եւրամիութեանը անդամակցութեան ճանապարհին թուրքիայի առաջընթացի վերաբերեալ հոլանդացի Քրիստոնես-Դեմոկրատ Ռիա Օոմեն-Ռյուլիյտէնի ներկայացրած զեկուցում:

Եւրախորհրդարանում ձախերի խմբակցութեան առաջարկած փոփոխութիւններով վերահաստատուած է Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելու եւ ուրացման պաշտօնական քաղաքականութեանը վերջ տալու՝ թուրքիային ուղղուած պահանջը, որը հոլանդացի պատգամաւորի հեղինակած նախագծում բացակայում է:

Զեկուցի նախագիծը քննադատութեան է արժանացել հենց Օոմեն-Ռյուլիյտէնի կուսակցութեան կողմից՝ մի շարք առանցքային, այդ թւում՝ քրդերի իրաւունքների, հիւսիսային Կիպրոսի օկուպացման, թուրքական կառավարութեան վերին օղակներում ազգայնական շրջանակների մեծ ազդեցութեան, Հայաստանի հետ սահմանը փակ լինելու հետ կապուած հարցերը շրջանցելու պատճառով:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՔՈՉԱՐԵԱՆ ՆՊԱՏԱԿ ԶՈՒՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ

Շարունակուած էջ 1-էն

ըսաւ. - «Իւրաքանչիւր նոր իշխանութիւն պէտք է ձգտի գնալ միաւորման: Իւրաքանչիւր նոր իշխանութիւն պէտք է ձգտի հասարակութիւնում միասնականութեան գաղափարը գարգացնել, այլ ոչ թէ պիտակաւորել, գնահատականներ տալ: Եւ եթէ մէկը փորձում է այսօր մեզ տալ քաղաքական գնահատական, դա չի նշանակում, թէ դա ժողովրդի գնահատականն է: Դա չի նշանակում, թէ դա ընտրողների գնահատականն է»:

Լեւոն Տէր-Պետրոսեանի այն մեղադրանքին թէ իշխանութիւնը փտախտ էր տարապի, վարչապետը հակադարձեց. - «Շատ աւելի

լաւ կ'անէք, որ վերցնէք Հայաստանի Հանրապետութեան որոշ թերթերի, էլեկտրոնային միջոցների նիւթերը մինչեւ 98 թուականը: Եւ կը տեսնէք, որ նոյն առաջին նախագահին բազմաթիւ այդպիսի մեղադրանքներով մեղադրուած են: Եթէ դրանից նա հաճոյք է ստանում, թող անի: Ինչ է եղել»:

Հարցին, թէ հնարաւոր կը նկատէ, որ Ռոբերտ Քոչարեանը պաշտօնավարութեան աւարտին նշանակուի Հայաստանի վարչապետ, Սերժ Սարգսեան պատասխանեց. - «Որեւէ հիմք չունեմ ստույգ չընդունելու պարոն Քոչարեանի յայտարարութիւնները: Այսինքն՝ ես չեմ տեսնում այդպիսի ցանկութիւն Քոչարեանի կողմից»:

ԳՈՆԿՐԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒ

Շարունակուած էջ 1-էն

րու մասին այն սին յայտարարութիւնները, թէ որեւէ բանաձեւ, որ կ'անդրադառնայ մարդու իրաւունքներու եւ ցեղասպանութեան հարցերուն, կրնայ վնասել որեւէ երկկողմ յարաբերութիւններուն:

«Այդ նամակում տեղ գտած շատ հարցերի հետ կարելի է չհամաձայնել, յատկապէս՝ այդպիսի բանաձեւի կարծեցեալ վնասների առումով: Ես կ'անդրադառնամ միայն այն անազնիւ յայտարարութեանը, ըստ որի այդպիսի բանաձեւը «վնաս կը հասցնի Հայաստանի եւ թուրքիայի միջեւ հաշտեցման հասնելու ջանքերին»:

«Ես փստոսանքով եմ նշում, որ որեւէ գործընթաց, որը կը խթանէր Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորումը գոյութիւն չունի: Մտահոգութիւններ չկան ինչ-որ թիւնցող գործընթացը վնասելու առումով պարզապէս շինծու կեցուածք է», - ըսած է նախարար Օսկանեանի փոխին յղուած

նամակին մէջ:
«Հայաստանը մշտապէս պատրաստ է եղել նորմալ յարաբերութիւնների հաստատել իր հարեւանի հետ: Այնուհանդերձ, նորմալացման հանգեցողիւր իւրաքանչիւր նախաձեռնութիւն արժանացել է թուրքիայի մերժմանը: Փոխարէնը, վերջինս շարունակաբար նախապայմաններ է առաջ քաշում: Թուրքիան առաջարկներ է ներկայացնում, որոնք պարզապէս անվերջ բանակցութիւնների յայտ են՝ առանց հարեւանների միջեւ նուազագոյն, սովորական յարաբերութիւնների հասնելու լուրջ յանձնառութիւնների: Պատմական յանձնաժողով կազմելու իրենց կոչը՝ քննարկելու այդ ցաւոտ պատմական իրադարձութիւնները, լուրջ չէ՝ հաշուի առնելով ազատ խօսքի եւ քննարկման վրայ դրուած սահմանափակումներն իրենց քրէական հետեւանքներով եւ այն ոչ բարեկամական միջնորդող, որ թուրքիան է ստեղծել՝ Հայաստանի հետ սահմանները փակ պահելով», - ըսուած է ՀՀ Արտաքին Գործոց նախարարի նամակին մէջ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ԱԶԳԱՅԻՆ

«ՄԵՆՔ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆԱԽԱԳԻԾ ՉԵՆՔ»

ԳՈՀԱՐ ՅԱԿՈԲՅԱՆ

Սեպտեմբերի 22ին լրացավ Ս.Գ.Հ.Կ. «Սարգիս Տիրունի» Ուսանողական Երիտասարդական Միութեան հիմնադրման մէկամեակը: «Առաւօտ»ը՝ Միութեան ատենապետ Նարեկ Գալստեանից հետաքրքրուեց՝ «կոլեգա» ուսանողական միութիւններից շնորհաւորանքներ ստացուե՞լ են. «Մենք բարձրաձայն չենք յայտարարել այդ մասին եւ մեր ծնունդը նշել ենք «նեղ շրջանակ»ով: Ընդդիմադիր ջանքերից միայն ՀՀԾ երիտասարդական թեւի հետ ենք լաւ ընկերներ, այնպէս որ, չէինք էլ սպասում, թէ մեզ կը շնորհաւորեն: Այդ մշակույթը մեր քաղաքական դաշտում դեռ չի ձեւաւորուել: Եթէ նորմալ երկրներում մարդիկ իրար հետ կարող են բանավիճել, յետոյ միասին գնալ գարեջուր խմելու, Հայաստանում նման բան չկայ: Այստեղ ցանկացած երկրորդ բանավէճ վերածուում է պապական թշնամութեան», - պատասխանեց Ն. Գալստեանը: Ուսանողական Միութեան ատենապետին հարցրինք՝ այս մէկ տարուայ ընթացքում իրենց առջեւ դրուած խնդիրների քանի՞ տոկոսն են յաղթահարել: «Մեր պլանների 10 տոկոսն ենք հնարաւորութիւն ունեցել իրագործել, որովհետեւ ցաւոք, Հայաստանի քաղաքական, մասնաւորապէս՝ երիտասարդական դաշտում, որպէս կանոն, մոնոպոլ վիճակներ են տիրում, ամէն ինչ հանրապետականացուած է: Բայց մէկ տարուայ ընթացքում ինչ-որ բաներ ստացուել են, խօսքը վերաբերում է թէ, կրթական համակարգում առկայ կոռուպցիայի դէմ պայքար-



ըին, թէ հակաիշխանական միջոցառումներին, մանաւանդ վստահ ենք, որ այս իշխանութիւնները Հայաստան երկիրը տանում են դէպի կործանում», - ասաց Նարեկը: Մեր այն դիտարկմանն էլ, թէ երիտասարդական միութիւնները, որպէս կանոն, ծնւում, իսկ եղածները աշխուժանում են միայն ընտրութիւնից ընտրութիւն, յետոյ իրենց առաքելութիւնն աւարտուած համարում, երիտասարդ հնչակը պատասխանեց. «Իսկապէս, մեր կուսակցութիւնը խնդիր ունէր հզորանալու, եւ եթէ Դաւիթ Յակոբեանաբար արտայայտուեմ՝ քաղաքական մարտադաշտ նետելու երիտասարդ եւ թարմ ուժերի, բայց, սրանով հանդերձ, մեր միութեան ստեղծումը կարճաժամկէտ ծրագիր չէ: Ինքներս լաւ չէինք գզայ, որ ինչ-որ կարճաժամկէտ նախագծի համար օգտագործուէինք: Մեր միութիւնը ստեղծել է որոշակի աւանդույթներ, եւ սահուն սերնդափոխութիւն ենք իրականացնում՝

չեշտը դնելով հիմնականում առաջին, երկրորդ եւ երրորդ կուրսի ուսանողների վրայ, որոնք աւելի ռոմանտիկ են, ամբիցիոզ, աւելի գաղափարական ու նուիրուած: Իսկ ընդհանրապէս երիտասարդական դաշտը դեգրադացուած է, շատացել են երիտասարդների թուիչքները մի կուսակցութիւնից մէկ այլ կուսակցութիւն»: «Առաւօտ»ի յաջորդ հարցին՝ Ս.Գ.Հ.Կ. «Սարգիս Տիրունի» Ուսանողական Միութեան անդամները յատկապէս որ բուհերի ուսանողներն են, Ն. Գալստեանը յայտնեց. «Մեր Միութիւնը աշխատում է խմբերով, որոնք բաժանուած են ըստ բուհերի՝ համալսարան, գիւղակաղերմիա, պոլիտեխնիկ, կոնսերւատորիա, մանկավարժական, հիմա աշխատանքներ են տարւում նաեւ թատերականում: 2-3 ամիս երիտասարդները փորձաշրջան են անցնում, որպէսզի ամէն պատահական մարդ չմտնի կուսակցութիւն: Բուհերի հետ աշխատելով հանդերձ՝ բուհերի ներսում չենք աշխատում: Որովհետեւ բուհերի ներսում լինելը նշանակում է ուսխորհուրդների մէջ լինել, այն դէպքում, երբ դրանց մեծ մասը հանրապետականացուած է:

Ընդամենը 2 ուսխորհուրդում ենք ներկայ: Իսկ թէ ո՞ր բուհերի, Ն. Գալստեանը չասաց. «Չեմ ասի, որովհետեւ մերոնք բացառապէս չենք, իրենք որպէս կուսակցականներ չեն հանդէս գալիս»: Նա նաեւ յաւելեց, որ առաջիկայում «Սարգիս Տիրունի»-ն աւելի է ակտիւանալու, իրենց կողմից կազմակերպուող քաղաքական բանավէճերին մասնակից է դարձնելու աւելի մեծ թուով երիտասարդների. «Խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ ընդդիմադիր երիտասարդական խորհուրդ ստեղծուեց մեր նախաձեռնութեամբ, բայց ամէն ինչ ձախողուեց: Հասկացանք որ կուսակցական որոշ երիտթեւերի հետ համագործակցութիւնն անիմաստ է, որովհետեւ աւելի շատ շուրջնական վիճակներն էին գերակշռում, քան աշխատելու ցանկութիւնը: Պիտի փորձենք սովորական երիտասարդների հետ աշխատանք տանել, մանաւանդ մի քանի անգամ յայտարարել ենք, որ կողմ ենք միասնական թեկնածուին, այն էլ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեանը: Մի բան պարզ է՝ միակ այլընտրանքը գործող վարչախմբին նա է»:

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱՆ ՊԱՐԱՆՁԱԾ Է ՔՆՆԵԼ

Մարտնադաշտ էլ-Էն

Թեամբ լայնածաւալ քննութիւն չէ նախաձեռնած: Թասքը կը յայտնէ որ, Հայաստանի խորհրդարանական յանձնաժողովներէն մէկու յանձնարարութեամբ խորանալով նախագծի մանրամասնութիւններուն մէջ նկատած է որ, «կաշառակերութիւնը այնտեղ սկիզբէն մինչեւ վերջ է, վերէն միջեւ վար, եւ խօսքը ոչ թէ մի քանի հազար տոլարի, այլ տասնեակ միլիոնա-

ւոր տոլարներու մասին է»:
«Օպզըրվըրի» համաձայն, ծրագրի սկզբնական նպատակն էր՝ բարելաւել Երեւանի բնակարաններու ջրամատակարարումը, սակայն այնուհետեւ այն վերածուած է ջրաչափերու տեղադրման ծրագրի: Ծրագիրը իրականացնողները իւրաքանչիւր ջրաչափի տեղադրումէն գրպանած են 10 տոլար: Հայաստանի մօտ Մեծ Բրիտանիոյ դեսպանը նամակ յղած է Համաշխարհային Դրամատան՝ պահանջելով հետաքննել այս գործը:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Ս. Գ. ՀԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

120 Ամեակին

ՓԱՐԱՄԱԶ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ



Երեկոն պիտի խանդավառէ՝
Լոնտոնէն ժամանած սիրուած երգիչ՝ **ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ**
եւ Լոս Անճելոսէն **ՀՐԱԶ ՊՕՂԱՐԵԱՆ** իր նուագախումբով

Շաբաթ 20 Հոկտեմբեր 2007, երեկոյեան ժամը 8:30-ին
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ - 1060 N. Allen Ave., Pasadena

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԳԱՐԼՕ ԿՈԼՏՈՆԻ «ՎԵՆԵՏԻԿԻ ԵՐԿԻՈՐԵԱԿՆԵՐԸ» ԵՒ «ԱՐՏԱԻԱԶԴ»-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՅԻՆԵՐԸ

ՏՕԲԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Աշխարհահռչակ երգիծաբան, թատերագիր Գարլո Կոլտոն, այլ անունանակոչութեամբ «Փափա Կոլտոնի», որուն ծննդեան 300-ամեակը կը նշուի այս տարի Իտալիոյ մէջ, ընտրութիւնը հանդիսացած է իր երեսնամեակը բոլորող «Արտաւազդ» թատերախումբին: Տրամագծօրէն հսկայ, երեք դարու անջրպետ մը իրարմէ կը բաժնէ Կոլտոնի եւ «Արտաւազդ»-ի սպրած դարաշրջանները: Կենցաղային, ընկերային եւ ազգային յատկանիշները դժուարին փորձաքարի գարնել, երիտասարդութեան սեմին նոր թեւակոխող «Արտաւազդ»-ի սիրողական տողոց-աղջիկներուն ունեցած կատարողական հմտութիւնները: «Վենետիկի Երկուրեակները» ու Սեպտեմբեր 23-ի կայաներկայացումը, առիթ պիտի դառնար ե՛ւ թատերախաղի ընտրութեան արդարացիութեան եւ երիտասարդ արտաւազդականներու արժանիքներուն դրսեւորման:

Ժիք մըն է, որ յաջողապէս կ'օգնէ դերակատարներուն կարենալ լաւագոյն արտայայտելու համար իրենց մտածողութիւնը: Նոյնքան կենսական է զգեստաւորումը (Անահիտ Հարմանտայեան, Գրիգոր Սաթամեան), վարսերու արտասովոր յարդարանքը (Անուշ Նաճարեան), բեմահարթակի իրապաշտ ձեւաւորումն ու կահաւորումը, (Ռաֆֆի Պոչաճեան, Սերժ Նաւեան, Արփի Էմիրզեան, Հրանդ Աճէմեան), բեմի լուսաւորումն ու ձայնը (Ռաֆֆի Գալեմքարեան), որոնք իրենց բնակավայրի զարդարանքն են քներու, երաժշտութեան եւ գոյներու ընտրութիւնն ու ձեւագիտութիւնը կը համապատասխանեն միջնադարեան ոճին: Անոնք հարազատ վերարտադրութիւնը կը կազմեն Կոլտոնի ժամանակաշրջանին ազնուական դասակարգի կենցաղի միջավայրին ու բարքերուն: Դիտել տանք, որ այդ բոլոր աշխատանքները կատարուած էին զնահատելի ձեւով: Կային անշուշտ իրագոր-



կալելու համար «Արտաւազդ»-ի երիտասարդ դերասան-դերասանուհիները: Դժուարին, խորը փորձառու դերասաններ պահանջող երգիծական թատերախաղ մըն էր «Վենետիկի Երկուրեակները»: «Արտաւազդ»-ի մեր երիտասարդ դերակատարները, բոլորն ալ կրնային ենթակայ դառնալ մերթ համոզիչ մերթ արուեստական չափազանցութիւններով լեցուն այդ վտանգաւոր խաղին, մտածելով, թէ շնորհիւ անոնց առաւելագոյնս զուարճութիւն պիտի մատուցեն հանդիսատեսներուն:

Չի պատահեցաւ այդ մէկը, ի պատիւ իրենց: Մեծ էր Պրն. բեմադրիչին ներդրումը: Բօզուրաչի դերով շնորհալի Նարինէ Աւագեան, մերթ խստաբիւր, խոժոռ, մերթ հանդարտ, բարեհամբոյց աչքերու եւ դէմքի խաղերով յաջողապէս կրցաւ արտացոլացնել հոգեկան իրավիճակ մը, որ համոզիչ եղանակով մը կը դրսեւորէր սիրոյ կարօտ դերատի աղջկայ մը հոգեկան տրամադրութիւնները...



Անմիջապէս հաստատում մը կատարելով դիտել տանք, թէ թատերախաղի հայերէնի թարգմանութիւնը, որ հեղինակութիւնն է դերասան եւ բեմադրիչ Գրիգոր Սաթամեանին, ուշագրաւ էր իր վարժ հայերէնով եւ թատերական սահուն ոճի յարմարութիւններով: Այդ թարգմանական յաջող աշխատանքը բեմահարթակը պիտի դարձնէր դերամատչելի, այլապէս՝ հարազատ: Լեզուն հիմնական գոր-

ծուծներ՝ վարչական, (ձէնի Քիլճեան), բեմավարութիւն, (Ռուբէն Հարմանտայեան եւ Մարօ Աճէմեան), բեմի օգնական՝ (Մարինա Մըսրէլեան) եւ «Արտաւազդ» վարչութիւն, որոնք լուռօրէն պիտի գային իրենց կատարելագործման հասցնելու բեմական եւ կազմակերպչական վերոնշեալ իրագործումները եւ տակաւին շատ բաներ: Արդարեւ, ամէն ինչ կարգին էր բեմահարթակի վրայ, հիւրըն-

վարագոյրին բացման առաջին իսկ տեսարանին՝ հանդիսասրահի անկիւններէն դէպի բեմ գրոհող ծաղկուն, թեթեւ եւ խանդավառ դերակատարներ բեմահարթակի վերածեցին ամբողջ հանդիսատեսներու հանդիսատեսներու եւ իրենց միջեւ: Մեծ էր ոգեւորութիւնը թատերասրահին ներս: Յաջող նախաբան մը արդարեւ, որ առաւել եւս պիտի զարգանար քիչ ետք: Բեմահարթակին կեդրոնը արձանաձեւ կայնած, իր էութեամբ գրաւիչ սիրոյ չաստուածուհին, (Նաթալի Ճանսըզեան) նոր խթան մը հանդիսացաւ սիրտերը ջերմացնող: Ըսինք, դժուարին սեռ մըն է երգիծական թատերգութիւնը: Ան շատ յաճախ կը խճողուի անբնական, նաեւ բռնազբօսիկ ֆիզիքական ու արտայայտչական շարժումներով ու խաղերով: Խօսքի, դէմքի ծամածրութիւններ, մարմնական անբնական շարժումներ չափազանցութիւններ կը կիրարկուին: Այդ բոլորը համոզիչ դարձնելու համար մեծ պիտի ըլլայ դերասանին բեմական տաղանդը եւ փորձառական հմտութիւնը: Այդ

Մարիա Շաքլեան սրտի մօտ դերակատարութեամբ մը մարմնաւորեց հանգուցային սպասուհիի մը, Գօլօմէինայի հարազատ տիպարը: Ներկայացման ամբողջ տեւորութեան Մարիան կրցաւ պահել սիրուն, թեթեւ, վայելուչ, համարձակ եւ ճշմարտախօս սպասուհիի մը տիպարը: Արլեգինօն՝ Յարութիւն Ֆաքճեան ծանօթ կատակերգակ դերակատար մըն է գաղութէս ներս: Առաւելաբար չափազանցեալ մարմնական շարժումներու դերով, նիւթական ամբաստանութեան ենթակայ եւ տակաւին Գօլօմէինայի հետ

Շաքլ. էջ 23

Advertisement for Atlantis Restaurant and Night Club. Features a belly dancer in a pink costume, a hookah with colorful smoke, and a group of dancers. Text includes: ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB, FRIDAY NIGHTS AT ATLANTIS, ARABIAN NIGHTS, ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ. EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHLALAH DANCERS. authentic cuisine, full hookah bar, VIP membership, full cocktail bar, live belly dancing, live music and DJ. ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB, 626.449.4599, 162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107.

North America Welcomes

KOHAR

Symphony Orchestra and Choir

Los Angeles
18 October
GIBSON THEATRE

Chicago
1 November
HARRIS THEATER

San Francisco
26 October
NOB HILL MASONIC CENTER

Detroit
30 October
MAX M. FISHER MUSIC CENTER

Boston
10 November
COLONIAL THEATRE

Montreal
18 November
PLACE DES ARTS

Toronto
16 November
CENTRE FOR THE ARTS

New York
20 November
CARNEGIE HALL

TicketFusion. [ticketmaster](http://www.ticketmaster.com)

www.koharconcert.com



Los Angeles welcomes

KOHAR

Symphony Orchestra and Choir

18 October
GIBSON THEATRE

ticketmaster

www.koharconcert.com

ՇՈՒԿՈՒԹԵՍԱԿԱՆ ԱՅՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Մարտնակուած էջ 1-էն

Թեամբ Տիար Յարութիւն Կոնոյեանի, Կլէնտէյլի քաղաքացետ՝ Արա Նաճարեան, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի եւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Հոգեպարար երգեցողութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ խորանին սուրբ միւսուսով օծումը կատարեց Վեհափառ Հայրապետը, աւրնթերակալութեամբ Գերշ. Տ. Խաժակ Արք.ի եւ Գերշ. Տ. Յովնան Արք.ի եւ մասնակցութեամբ ներկայ եպիսկոպոսներու եւ եկեղեցականներու: Այնուհետեւ ողջոյնի եւ բարի գալուստի խօսքերով հանդէս եկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ՝ Հոգշ. Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեան եւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Այնուհետեւ

ընդունելութիւն մը ի պատիւ Վեհափառին եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան:

ՍԿԻԶԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Երեքշաբթի, Հոկտեմբեր 2ին, 2007, կէսօրէ առաջ ժամը 11ին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Պըրպէնքի առաջնորդարանի մօտ, խուռնեւորամ հասարակութեան մը ներկայութեան եւ հանդիսաւոր արարողութեամբ սկսան Մայր տաճարի կառուցման աշխատանքները:

Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. «Հրաշափառ» երգեցողութեամբ ամպնովանի ներքեւ, առաջնորդուեցաւ շինութեան վայրը: Այստեղ ներկայ էին Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս պրն. Արմէն Լիւրոյեան, Պըրպէնքի քաղաքացետ՝



Գերշ. Խաժակ Արք., Գերշ. Տ. Վաչէ Արք., Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Գերշ. Տ. Յովնան Արք., Առաջնորդարանի Մայր տաճարի կառուցման աշխատանքներու արարողութեան ընթացքին



Photo by Karin Bekarian

Վեհափառ Հայրապետը կը կատարէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ խորանին օծումը առընթերակայութեամբ Գերշ. Տ. Խաժակ Արք.ի եւ Գերշ. Տ. Յովնան Արք.ի

ելոյթ ունեցաւ Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոսը: Ան իր ուրախութիւնը յայտնեց ի տես այս գեղեցիկ կառուցիչի եւ օրհնեց այն բոլոր անձերը, բարերարներն ու հաւատացեալները որոնք իրենց ներդրումն ունեցան այս աստուածահաճոյ գործի իրականացման համար: Վերջաւորութեան ազգընտիր հայրապետը Քրիստոսի ծնունդը խորհրդանշող իւզանկար մը նուիրեց եկեղեցիին:

Արարողութեանց աւարտին հարիւրաւոր ներկաներ հրաւիրուեցան եկեղեցւոյ կից Աղաճանեան սրահը, ուր տեղի ունեցաւ շքեղ

Մարտիա Ռամոզ, Կարդինալ Մահոնի ներկայացուցիչ՝ Հայր Ալեքսի Սմիթ, Ղպտի համայնքի առաջնորդ՝ Սերաբիոն Եպս., Սիրիաքներու առաջնորդ՝ Գաբրիէլ Եպս. Հրեայ համայնքի վարչութեան պետ՝ Ռապայ Մարք Տալմոնտ ընկերակցութեամբ Ռամպայ Ալպերթ Հէնքի, ներկայ էին նաեւ Վեհափառ Հայրապետի շքախումբի անդամներ՝ Արեւելեան Թեմի առաջնորդ Գերշ. Խաժակ Արք., Ռուսաստանի եւ Նախիջևանի առաջնորդ՝ Գերշ. Եգրաս Եպս., Ս. Էջմիածնի դիւանապետ Գերշ. Արշակ Եպս., գաւա-

զանակիր՝ Հոգշ. Յովնան Արք. եւ Թարգմանիչ՝ Արժ. Տ. Կորիճ Քհնյ.: Սոյն պատմական հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք., առաջնորդական փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Մ. Վրդ. եւ տամնակ մը հոգեւորականներ, բարերարներ, կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. եւ գոհունակութիւն յայտնեց որ Վեհափառ Հայրապետի ներկայութիւնը կը գուզադիպի նաեւ Արեւմտեան Թեմի հաստատման 80-ամեակի հետ: Ապա հրաւիրեց Ամենայն Հայոց Հայրապետը որպէսզի ելոյթ ունենայ:

Վեհափառ Ս. Էջմիածնէն եւ վերածնունդ Մայր Հայրենիքէն իր ողջոյնները հաղորդելէ ետք գոհունակութիւն յայտնեց կատարուած նոր ձեռքբերումներուն համար: Մասնաւորաբար գնահատեց Թեմի առաջնորդ Յովնան Սրբազանի եւ նախկին առաջնորդ Վաչէ Արք.ի կատարած օգտակար ներդրումները համայնքի կեանքէն ներս ապամաղթեց յաջողութեամբ աւարտել Մայր Տաճարի կառուցման աշխատանքները: Ապա սպիտակ աղաւնիներ արձակուեցան դէպի երկիրը

ի նշան խաղաղութեան:

Հանդիսութեան աւարտին ներկաները հիւրասիրուեցան Գալաչճեան սրահին մէջ: Այստեղ Յովնան Սրբազան ներկաներուն յայտարարեց թէ վերջին երկու օրուան ընթացքին Մայր Տաճարի Շինութեան ֆոնտին համար ստացուած է մէկ միլիոն 900 հազար տոլարի նուիրատուութիւն, ընդհանուր գումարը հասցնելով շուրջ 10 միլիոն տոլարի:

700 ՀՐԱՒԻՐԵԱԼՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԵԴԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Երեքշաբթի, Հոկտեմբեր 2ին, 2007 երեկոյեան ժամը 7ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսն ու իր շքախումբին անդամները, Հոլիվուտի մէջ, ներկայ եղան պաշտօնական ճաշկերոյթի մը, որ կազմակերպուած էր Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Տիկնանց Օժանդակ Մարմնի կողմէ: Սոյն ճաշկերոյթը տեղի ունեցաւ նորակառուց Տաղլեան գեղազարդ սրահին մէջ, որուն բացումը կատարեց Վեհափառ Հայրապետը եւ օրհնեց թէ սրահը եւ թէ սրահի բարերար Տօքթ. եւ Տիկ. Տաղլեանը:

Massis Weekly on the Internet
www.massisweekly.com

A.B.A. INSURANCE SERVICES

Life, Health
Group Health
Disability
Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

33th ANNIVERSARY

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՇՈՎՈՒՄԵՏԱԿԱՆ ԱՅՑ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՅՑԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ**



Photo by Karin Bekarian



Photo by Karin Bekarian



Photo by Karin Bekarian



Photo by Karin Bekarian



Photo by Karin Bekarian



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future

AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE

Proudly Presents the 4th Annual

AGBU SOCIETY DINNER



Honoring
**YENOVK
BALIKIAN**

AGBU Honor Member,
for his outstanding services and
total dedication to the AGBU.

Keynote Speaker
State Senator

**JOE
SIMITIAN**
California State Senate



Saturday, October 13, 2007 – 7PM

HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION \$1,000 (2 tickets)

For more information, call: 626.794.7942

Armenian General Benevolent Union / Glendale - Pasadena Chapter Presents

JOHN GABRIEL *the illusionist*

- OCTOBER 12 & 13 - 8:00 PM •
- OCTOBER 14 - 5:00 PM •
- OCTOBER 19 & 20 - 8:00 PM •
- OCTOBER 21 - 5:00 PM •

TICKETS \$20

AGBU ALEX MANOGIAN CENTER - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

For tickets and more information, please call: 626.794.7942

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

and

THE WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

Present

HAYORTATS DANCE ENSEMBLE

Performances on November 8 - 9 - 10 - 11, 15 - 16 - 17 - 18, 2007

For information please call AGBU offices (626) 794-7942

Massis Weekly

Volume 27, No. 35

Saturday, OCTOBER 6, 2007

Former Secretaries of State and Defense Intervening Against HR106 Armenian Genocide Resolution Scheduled for Vote in House Foreign Affairs Committee

WASHINGTON, DC -- The US House Foreign Affairs Committee has scheduled H. Res. 106 for a vote in committee this coming Wednesday, October 10, 2007. The bipartisan measure currently has 226 cosponsors — more than a majority in the House and the most support an Armenian Genocide resolution has ever received.

1926-ին, Թիֆլիսի Սոլոյազ թաղամասին հանդարտ ու հանդիսաւոր, պատկառելի մարդ մը կը քալէր, լայնեզր գլխարկը ծածկած ճակատին մէկ մասը: Կը մտնէ «Հայարտուն»՝ Շերամը լսելու, իր պատանեկութեան տարիներու ընկերոջ երգիչ՝ Գոքոր Տալեանը: Կը տեղաւորուի սրճարանին կիսամութ մէկ անկիւնը, գլխարկը գլխուն, որպէսզի չճանչցուի: Նուագածուները կը սկսին նուագել, վարիչը կը մօտենայ հիւրին, մատուցելու փափաքը: Ան միայն թառ նուագողին իր երգերու կատարումը կը ինդրէ: Շերամը կը սկսի երգել, մտածել. «Ո՞վ է ուզել իր երգը, տեսնիս: Չեղնի՞ր գիւմրեցի է...»: Ու կը կատարէ «Վարդ ցանեցի» երգը, ապա՝ «Սիրեցի, եարս տարան»: Շերամը ակարտելէ ետք, Կարոյին ակաջին կը փսփսայ, աչքերովը ցոյց տալով այցելուն: Կարոն չէր ճանչնար: Անորոշութիւնը կարծես աւելի եռանդուն կը դարձնէ ձայնը: Իսահակեանը այնքան կը յուզուի որ գլխարկը ինքնաբերաբար կը հրէ դէպի գազաթը: Շերամը կ'ընդհատէ երգը, նուագածուները կը շուարին, երգիչը թառը կը դնէ սեղանին վրայ ու կը նետուի սրահ, թեւերը լայն բացած կը գրկէ բանաստեղծին: - Վայ, Աւօ ջան, եկե՛՛լ ես, կը մըմնջէ Շերամը: - Է, Գոքոր ջան, ինչդ ես, լա՞ւ ես: - Էստից լաւ ինչ կրնայ էղնի, Աւօ ջան, էս ի՞նչդ որ եկել... Իսահակեանը ախ կը քաշէ ու կը թոթովէ. - Աշխարհի հեռուները հասաւ հայրենիքիս ձայնը, Գոքոր՛ր, ու ես էլի

ըսի՛ մայրդ որ կանչում է, գնա՛, մարդ Աստուծոյ: Մի սքանչելի երգ ունէիր, է... «Արի իրիկնահովին», «Մէկտեղ երթանք մեծ արտը...», լրացուց երգիչը: Իսկոյն գնաց, երգեց եւ ամբողջ սրահը քարացաւ լուսթեան մէջ: Շերամ յաճախ մեծահասակ ընկերներով քաղաքային այգի կ'երթար: Օր մը նկատեց թոռան հեւիհեւ գալը, ճաշի տանելու գինք: - Ի՞նչ գործ կ'ենէ թոռդ, ուստա Գոքոր, - կը հարցնէ նկարիչ Գէորգ Բրուտեանը: - Կոմսերվատորիայի ուսանող է, Գէորգ ջան, ձէնը կը մշակէ... էնպէ՛ս ձէն ունի որ... - կը հպարտանայ Շերամը: - Բարե՛ւ ձեզ, - ընդհանուրին կ'ողջունէ թոռը և իսկոյն պապին կ'ըսէ. Պա՛պ... չի կրնար շարունակել, կ'ընդհատեն գինք. - Շերամ եղբայր, թոռնիկդ չի կարող մի փոքրիկ տաղ կատարել այս գեղեցիկ պարտէզի մէջ, - կ'ըսէ ծերունի մը: - Է՛հ, Ոստանիկ եղբայր, չէի սպասեր, որ դուն էրքան խամ հարց տաս: - Ի՞նչ կ'եղնի որ, ուստա Գոքոր, - կը ինդրէ խոջա Վաղոն: - Մօ՛, թոռս սագարի երգիչ է՛, որ կայնի էստեղ ու ձէնը գլուխը գցէ... Թոռը, վերջապէս, պապի ականջին կը հաղորդէ, որ ամերիկացի հիւրեր եկած են ու կ'ուզեն գինք տեսնել, լսել: - Օ՛... որոտում են բոլորը, - դէ գնա՛, գնա՛...: Մինչեւ երաժշտանոց հասնելը, Շերամ հարցերով կը ումբակոծէ թոռանը: Ովքե՞ր են, ինչ մարդիկ են,

հագուստ-կապուստ ունե՞ն, ի՞նչ տեսքի են...: Քարլոսը պատասխանեց, որ կարգին մարդիկ են: Ուրեմն լաւ հագուստ կ'ըլլան, պապը նայեցաւ իր հագուստին ու մտմտաց: - Գնանք, պապ, էնտեղ կ'երեւայ, մի՛ մտահոգուիր: Արդէն երաժշտանոցի մուտքին, Արծրունը հեւասպառ կը հասնի և աւանդական հագուստը կը յանձնէ: Քարլոսը պապին հագուստը փոխեց, ապա առջնորդեց սրահ, առջևի աթոռներու բազմած ամերիկացիներ ծափահարեցին և իրարու նայելով բացականչեցին. «Պրաւօ՛, Օքէյ»: - Մօ, սա պարզ, հասարակ մա՞րդն է եղեր Շերամը: Վարդգէսը կը մօտենայ հօրը և ականջին կը շնջայ. - Հայրիկ, հիւրերն ուզում են, որ դու մէկ-երկու բան երգես: «Մայրիկ ջան, մնաս բարով, ես կ'երթամ սարով-քարով»: Մօր ու որդու բաժանման տաղը ակնապիշ լարուածութիւն ստեղծեց ունկնդիրներուն մէջ: Հիւրերէն մէկը ելաւ տեղէն ու ինդրեց. - Վարպե՛տ, կ'աղաչեմ քեզի, «Շորորան»՝ այդ անուշ սիրերգը կատարէ, կամ՝ «Դուն իմ մուսան ես»: Շերամը մօտ կանչեց որդուն ու ասաց. - Վարդ ջան, ախր չեմ կրնայ... Խօ գիտես, չէ՞, թէ քանի տարեկան եմ... - Գիտեմ, եօթանասուն ինը...



Գարլա Մարկոսեան (Շերամի թոռը) Վաստակաւոր օփերայի երգիչ եւ երաժշտական ֆինադատ Անգիլնէ Քէշիշեան-Մուրատեան

Որդիին դէմքը այնքան պաղաւտալից էր, որ հայրական սիրտը թունդ առաւ, խանդալատուած սկսաւ. «Բաղէն թոռած բլբուլ իմ...»: Վերջին տողն էր արդէն, խումբէն շարունակեցին սիրոյ երգը: Շերամ տեսաւ, որ ինքը պակաս մնաց, իր ծերունական ձայնը միացուց անոնց ձայնին: Սրբագան խոռովք յառաջացուց ամէնքի մէջ, բոլորն ալ կ'երգէին սիրահարի «անքուն գիշերուայ» մեղեդին: Այդ եղաւ իր վերջին երգը...: Երկու տարի ետք հոգին աւանդեց, 81 տարեկանին: Շերամի գանձարանը շատ հարուստ է, երաժիշտներ շատ օգտուած են, դարձեալ կը մնան արժէքներ՝ օգտուելու անոնցմէ:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՍԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՍԱԺՈՂՈՎՈՐ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՆՈՅՏԵՄԲԵՐ 28-30, 2007, ԿԼԵՆՏԵՅԼ ՔՈԼԵՃԻ ՄԷՋ

Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի Փիլիսոփայութեան հարցերու նուիրուած Միջազգային Երրորդ Համաժողովը տեղի պիտի ունենայ Կլէնտէյլ Քոլէճի մէջ, Ժողովներու Սրահ թիւ 212, Նոյեմբեր 28-30 օրերուն Կլէնտէյլի մէջ՝ կազմակերպութեամբ Կիլիկիա Գոլէճի (Տնօրէն Օննիկ Պայրամեան) եւ գործակցութեամբ Սթանֆորտ Համալսարանի, Քալիֆորնիոյ Հալամսարանի (Պըրքլի), Երեւանի Սլաւոնական Համալսարանի, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի, Մեթաֆիզիկոսի հանդէսի, եւ Պլաքուէլ Հրատարակչատան (Մեծն Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ): Համաժողովին ընդհանուր նիւթն է «Փիլիսոփայութիւն եւ Մեթաֆիզիկոսութիւն (Փիլիսոփայութեան Անդին), Ժամանակակից մտածողութեան ծիրէն ներս: Բացի բացման ընդհանուր ժողովէն, տեղի պիտի ունենան զանազան նիստեր մասնագէտներու կողմէ յատուկ հարցեր քննարկելու, կարծիքներ փոխանակելու եւ առաջարկներ ներկայացնելու: Կայ նաեւ մասնաւոր նիստ մը՝ մասնակցութեամբ երիտասարդ գիտնականներու, որոնք ժամանակակից գիտութեան նոր տուեալներով պիտի ներկայացնեն այժմէական հարցեր: Կը մասնակցին 13 փիլիսոփայներ եւ գիտնականներ՝ եօթ երկիրներէն եւ ցամաքամասերէն - Հայաստան, Եւրոպա, Հարաւային Ամերի-

կա եւ Միացեալ Նահանգներ: Հայաստանէն կը մասնակցին Ակադեմիկոս Փրոֆ. Գէորգ Բրուտեան, նախագահ Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի՝ նիւթ ունենալով «Մեթաֆիզիկոսի Գլխաւոր Ըմբռնումի Բացատրութիւնը՝ Մեթաֆիզիկոսութեան Հնարաւորութիւններու կապակցութեամբ»: Հայաստանի Սլաւոնական Համալսարանի Փիլիսոփայութեան բաժնի վարիչ՝ նիւթ ունենալով «Փիլիսոփայութեան եւ Մեթաֆիզիկոսութեան Մասերը ճշմարտութեան Հարցին մէջ», Պրիւսովի Անուան Երեւանի Լեզուաբանական Համալսարանի դասախօս Փրոֆ. Յասմիկ Յովհաննիսեան պիտի խօսի «Վիճարկում եւ Մեթաֆիզիկոսութիւն» նիւթին շուրջ: Յակոբ Մատոյեանի նիւթն է «Ն. Ա. Վասիլեւի Մեթատրամաբանութեան Ըմբռնումը»: Դաւիթ Մոսիսեան պիտի խօսի «Փիլիսոփայութեան եւ Կենսաբանութեան Համայնական Գիտակցութիւն»: (Յաջորդիւ միւս մասնակիցներու ցանկը կը ներկայացնենք): Ողջոյնի խօսքով կ'ըլլան պիտի ունենան Կլէնտէյլի նախկին քաղաքապետ Լարի Ջարեան, Տրքթ. Յարութիւն Սաղրեան եւ ուրիշներ: Բարի գալուստի խօսքեր պիտի կատարեն՝ Փրոֆ. Գէորգ Բրուտեան,

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻ ԱՌԹԻԻ ՀԱՆԴԻՍԱԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 14, 2007
Պիտի Պատարագէ ու Քարոզէ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Առընթերակայութեամբ՝ Տէր Նարեկ Ա. Գեղ. Մատարեանի
Սկիզբը Ժամերգութեան Առաւօտեան Ժամը 9:30 ին Ս. Պատարագ Ժամը 10:30 ին
Սուրբ Պատարագի հոգեգմայլ երգեցողութիւնը պիտի կատարէ Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը (:rgca.oumbi fimmadrourj;an 29_rd tar;dar]n h)
Ղեկավարութեամբ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կեօզիւմեանի Երգեհոնահարութեամբ՝ Ովսաննա Մեղրիկեանի
Արարողութենէն յետոյ տեղի պիտի ունենայ «Սիրոյ Սեղան»
Սիրով կը հրաւիրենք հաւատացեալները մասնակցելու Ս. Պատարագին եւ Սիրոյ Սեղանին:
Ձեր տեղերը ապահովելու համար հաճեցէ՛ք հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ հետեւեալ թիւով: (323) 269-0907

ARTISTS FOR KIDS PRESENTS

hye comedy show

Artists
kids




PHOTO CREDIT: MICHAEL RUIETER • DESIGN BY: COLOR DEPOT, INC.

**KRIKOR SATAMIAN
VAHE BERBERIAN
SAMVEL BAGHDASARYAN
VAHAGN SIMONYAN
DEMQ SHOW
KEV ORKIAN**



THE PASADENA CIVIC
300 E. GREEN ST. PASADENA, CALIFORNIA

OCTOBER 24 • 7:30pm

TICKETS: 818-808-8222 • 818-265-0506 • www.artistsforkids.us

PROCEEDS FROM THIS CONCERT WILL BE DONATED TO THE ARMENIAN EYECARE PROJECT



ՄՈՒԱՅՈՒԱԾ ՊԱՐՏԵԸ

Ռ. ԿՈՐԻԻՆ
(Շարունակումս ճախորդ թիւէն)

-Ի՞նչ կ'ասես հորեղբայր Ապրիլ 24-ի եւ մեր բռնազրաւուած հողերի մասին, Դաւթի աղջիկ՝ Արմինէն էր հարց տուողը.

-Հօգարի խելացի աղջիկ ջան, ինչպէս իմանում ես Սովետ Միութեան մէջ արգելուած է ազգային գաղափարախօսութիւնը, Ստալինի ժամանակ բազմահազար հայեր իրենց ազգասիրութեան եւ հայրենասիրութեան պատճառով աքսորուեցին Սիբիր, շատ-շատերը չվերադարձան, իսկ մնացածը վերադարձան հիւժուած ու մաշուած տաժանակիր աշխատանքների պատճառով: Դրանով հանդերձ որ ազգային մտածելակերպը դատապարտելի էր, սակայն մեր Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարները սկսեալ Միասնիկեանից մինչեւ Կարէն ԴեմիրՉեանը ծածուկ եւ քողարկուած իրենց ազգային զգացումներով բաւական կոթողային գործեր են արել, ինչպէս օրինակ՝ Լուսի տարածքը, Մատենադարանը, Ծիծեռնակաբերդի համալիրը, նուիրուած մեր բիւրաւոր նահատակների յիշատակին, թանգարանները, պետական շէնքերը, Արփաչալ-Սեւան թունելի ջրուղին, մետրօն եւ այլն: Ցեղասպանութեան եւ բռնազրաւուած հողերի մասին նույնիսկ արտապայտուելը թոյլատրելի չէր, ուր մնաց գրելը, սակայն Ապրիլեան եղեռնի յիսունամեակի ոգեկոչումը հարիւր հազար ժողովրդի քայլարշաւով Երեւանի փողոցներից դէպի Ծիծեռնակաբերդի համալիրը ապացուցեց, որ ոչինչ չի մոռացուել եւ անհնար է ի մտէ եւ ի սրտէ հանուին մեր անիրաւուած իրաւունքները, ցեղասպանութիւնը եւ հողերը: Ապրիլեան եղեռնի ժողովրդական պոռթկումը բորբոքեց անթելուած կրակը, որը թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում մեծ աղմուկ բարձրացրեց: Մինչ Հայաստանի կողմից որեւէ պաշտօնական պահանջ չի կատարուել թէ ցեղասպանութեան ճանաչման եւ թէ հողերի նկատմամբ, քանի որ Հայաստանն առանձին ճանաչուած երկիր չէ, յուսով ենք ապրում, այդ օրն էլ կը գայ:

Հայկի ազգային հարցերի շուրջ այսքան տեղեկութիւնը բոլոր ներկաներին գարմացրել էր, այնպէս որ Սերոբը հիացած նրա բացատրութիւններից հարց տուեց.

-Իսկապէս հաւատալիս չի գալիս, որ Խորհրդային Հայաստանից մէկը գայ, այսքան ազատ խօսի եւ այսքան բան իմանալ մեր ազգային կեանքից, որովհետեւ ուրիշներ ես եկել են, բայց շատ պահպանողական եւ կցկտուր են արտապայտուել: Հայկ եղբա՛յր, ինչդեմ, ասէ՛ք, այսքան տեղեկութիւններ որտեղի՞ց էք քաղել:

-Հին առած կայ, որ ասում է՝ դուռ ծեծողի դիմաց դուռը կը բացուի, կամ փնտուղը կը գտնի: Ես իրանում եղած ժամանակս էլ մեր ազգային հարցերով հետաքրքրուել եմ, մեր երկիրն էլ գնալուց օրից նոյն բնաւորութիւնը շարունակել եմ, անշուշտ բոլորս էլ նոյն ցանկութիւնը պէտք է ունենանք, մեր երկրի եւ ազգային հարցերը անընդհատ մեր հետաքրքրութեան կենտրոնում պէտք է լինեն:

Ըստ մեր հայկական սովորութեան օրուայ թամազան բոլոր ներկաներին առիթ տուեց իւրաքանչիւրն իր խօսքն ասի ու կենաց խմբի: Այդ հայկական ընտանեկան

ջերմ յարկի տակ մթնոլորտը այնքան հոգեթով ու հոգեզմայլ էր երգերով, արտասանութիւններով եւ խօսակցութիւններով, որ ներկաները սիրտ չէին կտրում հեռանալ: Արդէն կէս գիշերն անց յաջորդ օրուայ առաւօտեան ժամերն էին: Վերջապէս բարի գիշերներով ու նորից կը տեսնուէնքով ու մեր տներն համեցէքով մեկնեցին: Մնացին եղբայրները եւ քոյրը ընտանիքներով: Ասես որեւէ յոգնածութիւն նշմարուած էր նրանց դէմքին, անկասկած պէտք է ասել՝ ոչ: Քոյր ու եղբայրներ խոնուած իրար մէջ հա զրոյց էին անում ու զրոյց անում, կշտանալիք չունէին, 25 տարիների կտրուածութիւնը անբաւ կարօտանքի հոգեվիճակ էր ստեղծել նրանց ուղն ու ծուծում: Նրանց սրտաջերմ խօսակցութիւնը երկարեց մինչեւ կաթնագոյն լոյսի երեւումը, ապա յոգնած ու բեկուած անցան անկողիները:

Ոսկեգոյն առաւօտը բացուեց, արեւի գաղջ ճառագայթները պատուհանի փեղկերից դէպի ներս էին սողոսկել, անցիկներից Սերոբն ու Արեգնազանը ամենից շուտ արթնացել եւ նախաճաշի սեղանն էին պատրաստել: Խմբովին նախաճաշը երկար տեւեց համեմուտ անցելի քաղցր յուշերով: Ինչպէս նրանք ծրագրել էին իրենց նախամեծար գործը պիտի լինէր՝ պաշտամունքի գնային իրենց ծնողների շիրիմներին, 25 տարիների հեռուորութիւնը մազ իսկ մոռացութեան չէին տուել ծնողաց յիշատակը, այդու պատրաստուեցին եւ մեկնեցին Դուլաբի գերեզմանատունը: Տէր Գրիգորը սպասում էր իրենց, քահանայ հօր եւ տիրացու Սիսակի հետ միասին կրակ, խունկ եւ ծաղկեփնջեր ձեռքերին քայլեցին դէպի Ս. Յովհաննէս մատուռից ոչ հեռու հատուածում:

Մեր մեռելներին մտաբերելով, նրանց յիշելով, նրանց շիրիմներին պաշտում կատարելով, ցոյց ենք տալիս մեր երախտագիտութիւնը նրանց, կապուածութիւնը մեր անցեալին, մեր արմատներին եւ մեր ազգին: Իր մեռելներին մոռացութեան տուող անձը կը մոռանայ իր արմատները՝ իր ազգը:

Դուլաբի գերեզմանատունը նախապէս գտնուում էր Թեհրան քաղաքի կենտրոնից արեւելք շատ հեռու գտնուող մի հողատարածքում, որի շրջապատում հողատնտեսութեան արտեր ու այգիներ էին, նշանաւոր էր այդտեղի՝ Դուլաբի (Սար Ասիաբի) վարունգը, ձմերուկը, սեխը եւ բանջարեղէնը: Քաղաքապետարանի կողմից մեր գերեզմանատան կից տեղ էր յատկացուել ռուսների, յոյների եւ ասորիների նաեւ հայ կաթոլիկների համար առանձին շուրջ պատերով: Արդէն 30 տարուց աւելի է նրա տարողութիւնը լրացել եւ այլեւս ննջեցեալ չի թաղուում, դրանով հանդերձ որ եօթնասուն տարի է անցնում նրա կեանքից եւ շուրջ բոլորը բնակելիք շէնքեր են կառուցուել, նա գտնուում է, կարելի է ասել, Թեհրանի կենտրոնում, նա պահոււմ եւ պաշտպանուում է մեր Թեհրանի Առաջնորդարանի ծախսերով եւ հոգատարութեամբ: Վաղուց հայերին մի նոր գերեզմանատուն է յատկացուել մատչելի գնով շատ աւելի մեծ , ոչ շատ հեռու Թեհրանից, սարերի ստորոտում, տափարակ դաշտում, գերեզմանատունը կոչուում է՝ «Նոր Բուրաստան»:

Քահանան խաչով ու Մաշտոցով տիրացուի օգնութեամբ կատարում է հոգեհանգստեան արարողութիւն Աստուծոց խնդրելով հանգուցեալներ՝ Թումասի եւ Թամարի հոգիներին խաղաղութիւն: Վառուող խնկի կապուածուն ծխի հետ քուլալ-քուլալ վեր են սլանում յուզումնալից աղօթքները առ ի երախտագիտութիւն ծնողաց մաքրակենցաղ կեանքին եւ հանգստութիւն նրանց ամիւններին: Տապառաքարերը ծածկուեցին երփնեւրանգ ծաղիկներով, աչքերից զլլալացող բիւրեղեայ արցունքները որպէս գարնանային անձրեւի հատիկներ թրջում էին շիրիմաքարերը: Ով գիտէ ննջեցեալ ամուլը հոգեպէս հրճուում էր ի տես իրենց զաւակների այդ ի խորոց սրտէ յարգանքից:

Նրանք խումբով այցի ելան ծանօթ շիրիմներին: Մատուռի դիմացի հատուածը քահանաներին էր յատկացուած, որտեղ քահանաներ էին ննջում՝ տէր Վարդան, տէր Ներսէս, տէր Յովհաննէս, տէր Մեսրոպ, տէր Ղեւոնդ եւ ուրիշներ:

Շիրիմաքարերի եւ տապանաքարերի հետաքրքիր համապատկեր էր ներկայացել Հայկի տեսողութեան, նա իր կնոջ մատնացոյց էր անում արուեստի գործ կոթողները եւ մօտենալով կարդում էր նրանց վրայ քանդակուած գրութիւնը եւ խորհում էր.

-Դուք յիշատակի կոթողներ, շիրիմներ, տապանաքարեր:

-Որքան-որքան մարդիկ են ննջում ձեր հովանու տակ, նրանք հանգչում են անվրդով ու հանգիստ, կարծում են ոչ մի բան եղել է եւ ոչ մի բան կատարուել է, սակայն որքաններդ շիջել էք հայրենակարօտ՝ ցանկալով հայրենիքը տեսնել ազատ, ուժեղ եւ հզօր, որքաններդ անկատար մուրացով հեռացել էք անողորմ հիւանդութեանց ճիրաններում տանջուելով

, որքաններդ դառն ճակատագրի գոհ էք դարձել դեռ ձեր գարունը չբոլորած, որքաններդ ապրել էք ուրիշներին ապ-րեցնելով, որքաններդ չարչարուել էք վան պատուով կեանքի մաքառումով, որքաններդ ապրել էք բարի եւ ազնիւ մարդու անուն թողնելով, որքաններդ ապրել էք բարերար աշխատանքի անմեռ յիշատակներ թողնելով սերունդների կեանքում, որքաններդ ազգութեան համար ծեծուել եւ բանդարկուել ու հոգի աւանդել, որքաններդ որպէս մշակոյթի գործիչներ հալուել էք Մեսրոպեան լոյսը սփռելով եւ որքաններ կը գան ու կերթան, բայց երանի նրան մեր Թումանեանի խօսքով՝

Գործն է անմահ, լա՛ւ իմացէ՛ք, Որ խօսուում է դարէ դար, Երնէ՛լ նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար:

Տուն վերադարձի ճամբէն անցնում էր Թեհրան քաղաքի տարբեր մասերից եւ թաղերից: Բարձրաբերձ շէնքերը, ընդարձակ պողոտաները, զբօսայգիները, մայր ուղիները, բոլորը նորութիւններ էին Հայկի եւ Սաթենիկի մօտ: Նրանք կառուած ինքնաշարժի պատուհաններից աչք չէին կտրում շուրջ բոլորը դիտելուց:

Դաւիթը նկատելով եղբայրն ու եղբորակիւնը լուռ ու մունջ դրսի անց ու դարձով են տարուած, որպէսզի խօսկցութեան դուռը բացի, դարձաւ եղբօրը.

-Ինչ է եղբայր այսքան հրապուրուած ես դրսով, միթէ՞ ինչ կայ հետաքրքրական.

-Իրօք այս երկար տարիների ընթացքում շատ փոփոխութիւններ է նկատուում, դրանով հանդերձ որ երկրում պատերազմ է գնում, սակայն ամէն կողմ մարդիկ

Շարք էջ 20

Build Your EMERGENCY Kit Today!

10 իրերը, որոնք կ'օգնեն քո ընտանիքին յաղթահարելու արտակարգ իրավիճակը

1. Գոթ
2. Սուրճ
3. Անկողնի օճախ Եւ Գոթի Գաւառներ
4. Բացուց
5. Ապակեփ
6. ԱՍՏՄԻ ԵՄԵՐՅԵՆԻ ԿԻՏ
7. Կոքոս
8. Ուրիշ
9. Պատկեր
10. Քրեթիվ

Հավելյալ տեղեկութիւններ համար այցելիլ LABT.org կամ զանգահարիլ 1-866-388-5223

Just Be Ready. Prepare Together.

ՊԱՏՄԱՆ ԵՄԵՐՅԵՆԻ ԿԻՏ

Public Health



#1

VOLUME KIA DEALER IN CA!

CALL OUR 24 HOUR PRE-RECORDED

INFORMATION HOTLINE

TO HEAR DESCRIPTION & PRICES ON EVERY PRE-OWNED & CERTIFIED USED VEHICLE.

CALL 888-303-4542

AND ENTER THE EXTENSION OF THE VEHICLE IN WHICH YOU ARE INTERESTED. MINIMUM \$1,500 SAVINGS ON EVERY PRE-OWNED VEHICLE IN STOCK!

Year, Make, Model	STK. Y/M	Extension	Year, Make, Model	STK. Y/M	Extension	Year, Make, Model	STK. Y/M	Extension	Year, Make, Model	STK. Y/M	Extension
2005 Dodge Neon	F70316	219426	1001	2007 Isuzu Trooper	F70544	J09635	1063	2007 Toyota FJ Cruiser	P10427	001471	1119
2004 Dodge Ficer	F40544	101137	1002	2004 Toyota Highlander	F70010	102150	1064	2003 Volkswagen Beetle	P10035	213385	1120
2001 Chevrolet Corvette	F70902	115184	1003	2001 Honda CR-V	F70945	015195	1065	2005 Infiniti G35	P10735	213253	1122
2006 Dodge Dakota	F70001	567817	1005	2004 Kia Rio	F70702A	200641	1066	2007 Ford Mustang	P61180A	205383	1123
2007 Dodge Ram 1500	F70797	175067	1006	2004 BMW 14	F70419	500998	1067	2003 Infiniti G35	P10055	100121	1124
2003 Ford Explorer	F70951	7307094	1007	2003 BMW 14	F70551	724312	1068	2006 Toyota RAV4	P10336	043422	1125
2006 Pontiac G6	F70781	204615	1008	2007 Toyota FJ Cruiser	F70700A	009723	1069	2003 BMW 325i	P10021	P09239	1126
2005 Ford Thunderbird	F70310	106289	1009	2006 Honda Element	K705460A	005382	1070	2006 Hyundai Tucson	P10254	425258	1127
2000 Ford E-350	F70319	003340	1010	2007 Chevrolet Express G1500	P70000	109587	1071	2006 Hyundai Tucson	P10256	436294	1128
2005 Chrysler Sebring	F70926	639088	1011	2007 Chevrolet Malibu	F70776	292423	1072	2006 Hyundai Tucson	P10259	424991	1129
2004 Ford Expedition	F70459	0114598	1012	2007 Nissan Pathfinder	F70662	607398	1073	2006 Hyundai Accent	P10369	007970	1130
2002 Ford Explorer	F70153	027040	1013	2003 Honda CR-V	F70948	037948	1074	2003 Volkswagen Passat	P10006	410930	1131
2006 Ford E-150	F70494	015841	1014	2006 Volkswagen Beetle	F70051	200075	1075	2005 Hyundai Elantra	P10705	010928	1132
2006 Pontiac Bonneville	F70022	255632	1015	1997 Nissan Pathfinder	K70091A	103939	1076	2005 Nissan Altima	P10004	647571	1133
2005 Pontiac Grand AM	F70102	253548	1016	2007 Hyundai Sonata	F70784	178329	1077	2003 Mercedes ML350	P10954	433560	1134
2000 Ford Windstar	F70071	068060	1018	2006 Hyundai Sonata	F70258	070942	1078	2005 Toyota Camry Solara	P10962	500190	1135
1998 Chevrolet 3500	P60752	210530	1019	2007 Hyundai Sonata	F70705	177288	1079	2007 Kia Sorento	P10916	079106	1136
2005 Nissan Frontier	F70700A	404496	1020	2006 Mercedes E350	F70096	020522	1080	2005 Kia Sorento	C633	407730	1137
2004 GMC Envoy	F70943	206235	1021	2006 Toyota Tundra	F70023	548462	1081	2005 Kia Rio	P10515	275561	1138
2005 Honda Accord	F70949	072790	1022	2006 Toyota Tundra	C621	545190	1082	2005 Mitsubishi Lancer	P10067	032625	1139
2007 Chevrolet Trailblazer	F70006	102026	1023	2006 Toyota Sequoia	F70368	262064	1083	2006 Kia Sportage	P10709	100730	1140
2003 Honda CR-V	F70933	011601	1024	2003 Toyota Sequoia	P50400	139604	1084	2006 Mitsubishi Lancer	P10960	010929	1141
2002 Mitsubishi Montero	K517400B	021068	1025	2003 BMW X5	F70313	V79042	1085	2006 Kia Sportage	P10012	101348	1142
2004 Lexus IS	K700900	001350	1026	2003 BMW X5	P60756	042521	1086	2005 Chevrolet Aveo	P10035	225446	1143
2005 Honda Civic	K7040300	023747	1027	2002 Lexus RX	P60211	298749	1087	2006 Kia Spectra	P10021	220300	1144
2006 Jeep Liberty	F70043	220660	1028	2006 Mitsubishi Outlander	F70272	032060	1088	2006 Kia Sedona	P10912	074506	1145
2004 Kia Rio	F70034A	225433	1029	2006 Mitsubishi Outlander	F70271	045182	1089	2006 Kia Optima	P10958	036658	1146
2006 Hyundai Sonata	F70015	105623	1030	2005 Kia Rio	F70038	381380	1090	2002 Kia Sedona	K70038A	349711	1147
2004 Lantol LS	P50106	040521	1031	2006 Mini Cooper	F70006	J09751	1091	2006 Kia Sedona	P10917	073262	1148
2004 Honda Accord	F70940	106006	1032	2006 Mazda Mazda3	P60044	499222	1092	2006 Kia Sedona	P10915	070267	1149
2006 Jeep Commander	F70033	108831	1033	2006 Chevrolet Aveo	F70022	566277	1093	2004 BMW 525i	P10020A	040118	1150
2006 Nissan Maxima	F70024	064713	1034	2003 Audi A4	U713A	754156	1094	2006 Dodge Sprinter 2500	P10904A	968743	1151
2003 Nissan Frontier	P61024	427397	1035	2003 Audi A4	U713A	754156	1094	2004 Kia Optima LX	P40363	270295	1152
2007 Toyota Camry	F70776	023121	1036	2006 Nissan 350Z	F70099	305529	1095	2005 Kia Optima	P60251	387301	1153
2007 Dodge Charger	F70284	725554	1037	2003 Nissan Maxima	C624	415372	1096	2005 Kia Optima	P60346	400996	1154
2006 Pontiac Grand Prix	F70359	241085	1038	2004 Nissan Maxima	F70553	215971	1097	2003 Kia Optima	P60943	200471	1155
2007 Nissan Frontier	F70750	401217	1039	2007 Nissan Maxima	F70505	042065	1098	2002 Kia Optima	11292	099588	1156
2006 Honda Civic	K7146KA	510024	1041	2005 Scion xB	F70946	290316	1099	2002 Kia Optima	11290	106605	1157
2002 Jeep Grand Cherokee	F70947	201855	1042	2007 Nissan Maxima	F70456	601209	1100	2005 Kia Optima	P60330	293904	1158
2003 Acura MDX	F70717	534154	1043	2003 Kia Spectra	F70700A	295029	1101	2005 Kia Optima	P60258	387142	1159
2004 Acura MDX	F70716	550191	1044	2007 Toyota Camry	F70061	003119	1102	2005 Kia Optima	P50028	293631	1160
2006 Chevrolet Express G1500	F70009	227677	1046	2004 Infiniti G35	F70354	003738	1103	2005 Kia Optima	P60705	290964	1161
2006 Nissan Maxima	F70952	029810	1047	2005 Infiniti G35	F70643	403074	1104	2005 Kia Amanti	P60196	053296	1162
2005 Nissan Sentra	K61738A	463207	1049	2003 Infiniti G35	P60112	103945	1105	2006 Kia Sorento	P10704	030004	1163
2006 Nissan Sentra	F70936	404933	1050	2004 Infiniti G35	F70558	203890	1106	2003 Kia Sorento	P10708	100175	1170
2006 Nissan Sentra	F70315	459945	1051	2004 Infiniti G35	F70416	202021	1107	2006 Kia Sorento	P10701	572703	1171
2004 Volkswagen Passat	F70903	106113	1052	2005 Mini Cooper	F70096	065224	1108	2006 Kia Sorento	P10696	585032	1172
2006 Chrysler Town & Country	F70056	704278	1053	2003 Infiniti FJ35	F70417	001942	1110	2005 Kia Sorento	P50771	410839	1173
2007 Toyota Camry	F70964	121236	1054	2007 Volkswagen Passat	F70924	052017	1111	2006 Kia Sorento	P10706	501432	1174
2003 Toyota Tundra	F70941	246321	1055	2004 Infiniti FX45	F70540	400383	1112	2006 Kia Rio	P10702	140190	1175
2006 Chevrolet Express G1500	F70001	111972	1056	2005 Infiniti FX45	F70520	402184	1113	2007 Audi Allroad	P10061	124569	1176
2002 Jaguar X-Type	F70067A	004090	1057	2006 Suzuki K1-7	F70372	105206	1114	2005 Kia Sorento	P10568	443635	1177
2004 Toyota Sienna	F70942	221089	1058	2006 Suzuki K1-7	F70372	105256	1115	2005 Kia Sorento	P60036	501316	1178
2004 Nissan 350Z	F70753A	101110	1059	2005 Hyundai Elantra	F70053	005624	1116	2006 Kia Sportage	P10498	156674	1179
2003 Toyota Solara	F70910	000912	1061	2005 Nissan Altima	F70065	130618	1117	2006 Kia Sportage	K70499A	225194	1180
2004 Chevy Trailblazer	F70935	275037	1062	2003 Toyota Highlander	P60561	115665	1118	2002 Audi A6	P10007	4125602	1181



#1 VOLUME KIA DEALER IN CA!

2242 San Fernando Road, LA 90065

All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document preparation charge and any emission testing charge. All vehicles are on approval of credit. Rebates are not to be used with any special APR programs. Offer ends the close of business date of publication.

TOLL FREE:

866-211-8000

SE HABLA ESPAÑOL

VIEW PICTURES

Check Out These Vehicles & More! www.glendalekia.com

ՄՈՒԱՅՈՒԱՑ ՊԱՐՏԵԸ

Շարունակում էք 18-էն

անվրդով իրենց գործով ու կեանքով են զբաղուած, շինարարութիւններ են կատարուում, հնացած շէնքերը քանդում եւ նորերն են կառուցում, ինչպէս երեւում է Թեհրանի բնակչութեան թիւն էլ շատ-շատացել է, ինչ կասես Դաւիթ:

-Իրաւացի ես եղբայր, պատեւազմական դատու բնակիչները ամբողջութեամբ թափուել են Թեհրան, տարբեր նահանգներից անգործութեան հետեւանքով նոյնպէս Թեհրան են գաղթել գործի համար, կարծեմ տասնմէկ միլիոնից աւելի բնակչութիւն ունենայ, որը այս քաղաքի համար շատ-շատ է, որովհետեւ առաւել երթեւեկութեան մայր ուղիներ են անհրաժեշտ այս ահալու խցանումներից ազատուելու համար, միւս կողմից Թեհրանի օդը իսկապէս հեղձուցիչ է դառնում ի մասնաւորի տաք եղանակներին:

Խօսակցութիւնները շարունակուեցին մեքենայի մէջ մինչեւ տուն հասան: Գերեզմանատուն այցելողները քահանայի եւ տիրացուի հետ հրաւիրուեցին տուն հոգեճաշին մասնակցելու համար: Քահանայի աղօթքով եւ օրհանքով սեղանը բացուեց: Ըստ պատշաճի արտայայտութիւններ եղան ննջեցեալների մասին եւ կենացներ խմուեցին ապրողաց արեւշատութեան համար:

Հայկը քահանայի մօտ նստած լինելով առիթից օգտուելով ցանկութիւն յայտնեց տեղեկութիւններ ստանալ Թեհրանի հայոց թեմի մասին.

-Տէր հայր ինչպէս տեղեկ էք

մեր մօտ կրօններին կարեւորութիւն չի տրուում, ընդհակառակը այստեղ իրանում վարչակարգը իսլամական է եւ երկիրը շարիայի օրէնքներով է կառավարուում, դպրոցականները իսլամական կրօնական դաստիարակութիւն են ստանում եւ ժողովուրդը ջերմեւունդօրէն կրօնին է հետեւում: Մեր հայ երեխաներին դպրոցներում մեր կրօնն է դասաւանդուում, մեր առաջնորդարանի դրուածքը ինչպէ՞ս է.

-Մենք՝ Իրանի հայերս, Հայոց Առաքելական եկեղեցուց զաւակ ու հետեւորդ պետութեան կողմից սահմանադրական օրէնսդրութեամբ ճանաչուած եւ ընդունուած ենք որպէս քրիստոնեայ փոքրամասնութիւն: Իրանում գործող երեք թեմերը օժտուած են իրենց առաջնորդարանով, իւրաքանչիւրը պետութեան կողմից հաստատուած օրինաւոր հայութեան ղեկավար կենտրոն՝ կրօնական, ժառանգական, ամուսնական եւ կրթական իրաւասութիւններով:

-Մեր Թեհրանի թեմի առաջնորդն է՝ տէր Արտակ արք. Մանուկեանը: Թեմն ունի պատգամաւորական ժողով, որոնք ընտրուում են ժողովրդի կողմից: Թեմն ունի գործադիր մարմին՝ թեմական խորհուրդ անունով, որն ընտրուում է պատգամաւորական ժողովի կողմից, որի նախագահն է թեմիս առաջնորդը: Թեմական խորհուրդը կենքի է կոչում մարմիններ, որոնք թեմականի հսկողութեան ներքոյ հոգ են տանում եկեղեցիներին, դպրոցներին, գերեզմանատներին եւ ազգային այլ հաստատութիւններին:

-Տէր հայր եթէ հաճիք համառօտ տեղեկութիւն տաք դպրոցների մասին.

-Կը ներէք ինձ, ես գործով ժամադրութիւն ունեմ, պիտի գնամ, դպրոցների մասին հարցրէք պրն. Արմէնին, նա ուսուցիչ է եւ կը բաւարարի ձեզ իր սպառիչ պատասխաններով:

Տէր հայրն աղօթելով տիրացուի հետ մեկնեցին:

-Քառասունի հասնող մանկապարտէզ, տարրական, ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցներ ունենք, ուր սովորում են տաս հազարից աւելի աղջիկ եւ տղայ աշակերտներ: Մեր դպրոցները երկսեռ չեն, տղաներ եւ աղջիկներ առանձին, իսլամական լեզուափոխութեան արդիւնք: Մեր բոլոր դպրոցներում Արտակ սրբազանի խմբագրած կրօնի դասագրքերն են դասաւանդուում: Դպրոցներում դասաւանդուում է հայոց լեզու եւ գրականութիւն, հայոց պատմութիւն եւ աշխարհագրութիւն թոյլատրուած չէ: Յաւօք հայոց լեզուի դասաժամերը սահմանափակուեցին, խօսք կայ որ բարեխաւուի, սպասում ենք: Իրանահայ գաղթօջախը ջանում է պահել հայկականութիւնը եւ այդ առաքելութեան են նուիրուած մեր երեք թեմերը, սակայն արտագաղթելու նշաններ են երեւում:

-Շնորհակալութիւն պրն. Արմէնին հակիրճ տեղեկութեան համար:

մար: Այնուհետեւ խօսակցութիւնները կանգ չառան, այլ մտքերի եւ տեսակէտների փոխանակութիւններ եղան իրանի հայութեան ապագայի եւ ընդհանուր առմամբ Սփիւռքահայութեան եւ Հայաստանի մասին, բոլորի մօտ այն տեսակէտն ու համոզումն էր տիրակալ, թէ՛ հայրենասիրական եւ ազգային ոգին ամրապնդել մեր եկող սերունդների հոգում եւ սրտում, նաեւ Հայաստանում կայք հաստատել, այնտեղ ապրել, որովհետեւ դրսի երկրներում ձուլման վտանգը սպառնում է:

Նովրուզեան տօնը սեմին էր, մի քանի օրեր էր մնացել իրանական թուատարին՝ 1364-ը աւարտուէր, դեռ բոլոր գործատեղիները աշխատում էին: Ամենուրեք ջանում էին գնացող տարուայ յաճախորդների պատուէրները աւարտել, կիսատ գործերը լրացնել, հաշիւները փակել, մոռացուած պարտքերը վճարել եւ ստանալիքներն էլ պահանջել, այսինքն՝ այսօրուայ գործը վաղուան չթողնել:

Դաւիթենց տանը լեցուն էր մօտ ու հեռու հարազատներով եւ Հայկի վաղեմի ընկերներով, որոնք եկել էին Հայկի եւ Սաթենիկի գալուստը ողջունել եւ իրենց յարգանքն ու սէրը յայտնել:

(Շարունակելի 3)

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՄԱՐԴԱԿԵՐՊ ՊԱՇՏՊԱՆ ԵՐԵՏԱԿ ՄԱՐԻ ԸԱԶԱՐԵԱՆԻ ԿԵՆՂԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լիբանանեան երկնակամարին վրայ մարդասիրական գործունէութեան ժառանգութիւնը հարստացնող այն մարդակերպ պահպան հրեշտակներէն՝ Մարի Հազարեան ոչ եւս է:

Տիկին Հազարեան, որ շատ, շատերուն կողմէ ճանչցուած է որպէս «Լիբանանի Մայր Թէրէզան» երկրաւոր իր կեանքը ամբողջացուց յաւերժական հանգիստի անցնելով անցեալ Հինգշաբթի, Սեպտեմբեր 20ին:

Ան մեզի որպէս ժառանգ թողնող բազմաթիւ յիշատակներ ուր տկարը եւ կարիքաւորը անգամ մը եւս տիրացան իրենց լիակատար քաղաքացիական իրաւունքներուն:

Մարի Հազարեան աւելի քան 60 տարի կամաւոր կերպով, ոգի բռնի պայքարած է Լիբանանի Հայ եւ ոչ-Հայ կարիքաւորներուն եւ նոյնիսկ հայկական հաստատութիւններուն իրաւունքներուն համար:

Ամենէն դժուար պահին օգնութեան ձեռք մեկնելով, ան բ ա գ մ ա հ ա գ ա ը մարդոց կեանքը բարելաւած է:

Աւելի քան վեց տասնամեակներու վրայ երկարող ժամանակաշրջանին, Տիկ. Հազարեան այդ մարտ-թոնեան մարդասիրութիւնը կատարած է առանց խտրականութեան: Անոր համար կապ չունէր, թէ կարիքաւորը Հայ առաքելական, աւետարանական, կաթողիկէ, լիբանանցի Արաբ քրիստոնէայ թէ իսլամ է: Ճիշտ այդ պատճառով է, որ ան արժանացած է համաժողովրդական սիրոյ եւ գուրգուրանքին: Ինչպէս նաեւ՝ ան արժանաւոր քաղաքացիներէն է Մայրիներու Երկիր՝ Լիբանանին, ստանալով պետական, ազգային եւ միջազգային բարձրագոյն գնահատանք եւ ճանաչում:

Հռովմի Սբ. Պապէն մինչեւ Հայոց Կաթողիկոսը, մինչեւ Լիբանանի Նախագահը, Եւրոպայի եւ Ամերիկայի զանազան ղեկավարներ զինք դրուատած են իր մղած անդուլ պայքարին համար ի նպաստ տկարին եւ կարիքաւորին իրաւունքներուն ձեռքբերման եւ գործադրման:

Անոր շնորհուած է Հայրապետական օրհնութիւն, Լիբանանի պետական պատուանշան եւ նախագահական շքանշան, Նիւ Եորքի նահանգային պատուոյ բանալին եւ բազմաթիւ այլ գնահատագրեր եւ նշաններ:

Տիկին Հազարեան իր անգին մասնակցութիւնը բերած է անհամար որբերու, տարեցներու, անկարներու, յանցագործութեանց կենդանի գոհերու, անարդարօրէն բանտարկուածներու իրաւունքներուն յարգման ի խնդիր:

Անոր կատարած բարեգործութեանց շարքը այնքան երկար է, որ անկարելի է այս յօդուածին մէջ բաւեցնել: Չանոնք պատշաճ կերպով նշելու համար հարկաւոր է հատորներ ամբողջացնել: Որպէս նմուշ,



նշենք միայն մի քանի պարագաներ.

- 1960ականներուն, լիբանանահայ մը, Աւետիս Պալեան մահապատիժ ստացած էր իր գործած ոճիրին համար: Սակայն, նոյն տիպի ոճիր գործող ոչ-հայ ոճրագործներ ալ կային որոնք մահապատիժ չէին ստացած: Սակայն Լիբանանի կառավարութիւնը կ'ուզէր օրինակ դարձցնել Աւետիսին մահապատիժը: Տիկ. Հազարեան անդուլ կերպով պայքարեցաւ եւ ի վերջոյ կարողացաւ համոզել օրուան Նախագահ Քամիլ Շամունին որ նախագահական հրամանագրով Աւետիսին պատիժը փոխէ ցկեանս բանտարկութեան եւ իննչէն անոր կեանքը: Որպէս պատուախնդիր Հայուհի, Տիկ. Հազարեան չէր ուզեր որ Հայութեան անունը այդպէս առանձնացուի եւ անարդարօրէն արատաւորուի Լիբանանի եւ յատկապէս ամբողջ Միջին Արեւելքի մէջ:

- Մինչեւ 1960-ականներուն աւարտը, Լիբանանի կառավարութիւնը Պետական Վիճակահանութեան գոյացած շահերէն լիբանանահայ համայնքին բաժին չէր հաներ: Երկարատեւ ջանքերէ ետք, Տիկ. Հազարեան եւ ան կ ա ը ո ղ ա ց ա լ մնայուն կերպով լիբանանի հայութեան բաժին ապահովել որ մինչեւ օրս կը շարունակուի:

- 1960-ականներուն վերջերը, Լիբանանի Շինարարութեան եւ Բարգաւաճման Նախարարութիւնը պաշտօնական հրամանագրով առանձին առանձին որոշած էր քանդել

- 1) Հայաչէնի հայկական բնակարանները,
- 2) Նոր Հաճըն եւ Թօմարգա հայկական թաղամասը,
- 3) Ինչպէս նաեւ՝ Աշրաֆիէյի հայկական «Սպիտակ Տուները», տեղ բանալու համար նոր շինարարութիւններու: Տիկ. Հազարեան տիւ եւ գիշեր պայքարեցաւ եւ յաջողեցաւ կանխել եւ վերջնականապէս արգիլել անոնց փլուզումը:

- 1960-ականներուն վերջերը, Նոր Հաճընի մէջ, Սահակեան վարժարանի ոչ-հայ հողատէրը երկա-

րատել բացակայութենէ ետք Ափրիկէն կը վերադառնայ Լիբանան եւ կ'որոշէ իր հողը տրամադրել այլ շինարարական ծրագրի մը եւ քանդել վարժարանի շէնքը:

Կառավարական հրամանագիր ձեռք կը բերէ գայն հիմնադրատակ քանդելու համար:

Քանդիչ գործիքները կու գան որ սկսին քանդել: Սակայն Տիկ. Հազարեան մետասաներորդ ժամին կը կարողանայ Մարգային Կառավարիչէն իրաւունք ձեռք բերել որ Հայ երեխաներով, կիներով եւ տարեցներով շրջայ կազմէ եւ վերջնականապէս արգիլէ դառնայ քանդումին դէմ: Հայկական վարժարանը կը փրկուի:

- Մինչեւ 1960-ականները, Լիբանանի բանտային համակարգը մնացորդացն ու շարունակութիւնն էր օսմանեան հակամարդկային սիստեմին: Տիկ. Հազարեան զանազան քաղաքակիրթ երկիրներու բանտային համակարգերը այցելելով, լաւապէս կը տպաւորուի անոնց մարդավայել սիստեմով: Լիբանան վերադառնալով, պահանջ կը բարձրացնէ որ Լիբանանի բանտային համակարգը բարելաւուի: Ան կը գիտարկէ Լիբանանի բանտերու բարեկարգման շարժումը: Եւ ի վերջոյ Լիբանանի կառավարութիւնը կը ձեռնարկէ Լիբանանի մէջ քաղաքակիրթ երկրի մը վայել նոր բանտեր կարուցել:

Անոնցմէ ամենէն ակնառուն՝ Ռումիէյի արդիական եւ լայնատարած բանտը ուր բանտարկեալին արհեստ կը սորվեցնէին լիբանանահայ արհեստագէտները եւ երբ բանտարկեալին պատժաշրջանը կ'աւարտէր ան արդէն արհեստի մը տիրացած կ'ըլլար եւ առանց յանցագործութեան դիմելու իր կեանքը կը շարունակէր արդիւնաւէտ քաղաքացիի մը վերածուելով:

Մեծ է այն Հայ եւ ոչ-Հայ մարդկանց թիւը որոնք զանազան կարիքներու համար, սկսած ծննդաբերութեան նպատակով հիւանդանոցի մէջ տեղ ապահովելէն մինչեւ որբերուն զանազան հիւանդոցներուն մէջ տեղաւորելը, մինչեւ հիւանդներուն բժշկական խնամք ապահովելը, դիմած են Տիկ. Հազարեանին որ մայրական գուրգուրանքով օգնութեան լատ եղած է եւ յաջողած է մէն մի պարագայ բարուք կերպով լուծել: Ան այս բոլորը կատարած է առանց ցեղային, կրօնական կամ գաղափարական խտրականութեան: Ճիշտ այդ պատճառով ան ամէնուն համար անխտիր եղած է «Թանթ Մարի (մօրաքոյր Մարի)»:

Ան իր կեանքով եւ գործով

օրնակելի կեանք մը ապրեցաւ եւ շատերուն ներշնչեց որ անոնք ալ իրենց հերթին իրենց կեանքի առաքելութեանն թէկուզ մէկ մաս մը յատկացնեն շրջապատի բարելաւման եւ կեանքի դժուարութիւններու մեղմացման նպատակին:

Երբ Տիկ. Հազարեանին կը հարցնէին թէ ինք ի՞նչ կրօնի կը պատկանի, ան միշտ ժպտաղէմ՝ կը պատասխանէր. «Անա Արամանի ուսման Մուսլիմ Քաթօլիկ - (Ես Հայ եւ իսլամ-կաթողիկէ եմ)»: Ուրիշ բան չէր կրնար ըլլալ:

Ան փոքր տարիքէն, ներքին մղումով մը, դեռեւս 8 տարեկանին արդէն կատարած էր իր մարդասիրական առաջին գործը: Ինքն ալ Հայոց Յեղապատութենէն այլի մնացած իր մեծ մօր հետ վերապրող մը՝ փոքրիկ Մարի Լիբանան հաստատուած էր:

Երբ իր բարեկեցիկ ընտանիքին տունէն ամէն օր քալելով դպրոց կ'երթար, ճամբան կը հանդիպէր թաղին մէջ հագուստագոյն թիւն քաշքրտող Հայ տարեց թշուառականի մը որ կը բնակէր թիթեղեայ հիւղակի մը մէջ: Ամէն անգամ որ անոր կը հանդիպէր, իր տունէն գաղտագողի դուրս բերած կանացի հագուստ մը կամ վերմակ մը կու տար: Ի հարկէ փոքրիկն Մարիին մեծ մայրն ու մայրն ալ իրենց հերթին կ'օգնէին այդ անտէր մնացած Հայ կնոջ: Սակայն չէին հասկնար թէ ինչպէս կը պատահէր թէ այդքան շատ թիւով իրենց սեփական հագուստ-կապուստէն կտորներ անոր արդէն հասած կ'ըլլային: Ի վերջոյ գաղտնիքը կը պարզուի: Փոքրիկն Մարին էր, որ այդ բոլորը տունէն դուրս կը տանէր ու կը յանձնէր այդ տարեց կարիքաւորին: Փոքրիկն Մարիին մեծ մայրն ու մայրը կ'ըսեն. «Ապրիս աղջկանակ»:

Արդէն անոր մէջ սկսած էր սաստկանալ շրջապատին անխտիր օգնելու ներքին մղումը եւ այդ անշէջ կրակը պիտի չարատեւէր մինչեւ իր վերջին շունջը Լոս Անճելոսի մէջ խաղաղականի այս հիւրընկալ ակերուն:

Արդեօք ո՞ր մարդը այս բոլորը կարողացավ պիտի չի խոնարհէր անոր խնկելի յիշատակին առջեւ: Արդեօք ո՞ր գիտակից մարդը իր սրտին մէջ անմառ պիտի չպահէր անոր լուսաւոր ջահը:

Մայրեր կան, որոնք կ'ապրին բոլորին համար: Անոնց սէրը տիեզերական սէրն է եւ այդ համամարդկային սիրոյ կրակով է, որ այդ անգուզական մայրերը կ'ապրին յաւիտեան: (ԱԳՁ)

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

**Հիպնոսարուծութեան երկու կեդրոններ
ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ
Արթին Սադրեանի
Փաստիւնայի մէջ՝
Երեւան, Հինգշաբթի եւ Շաբաթ
Հասցէ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104**

**Կլէմտէյի մէջ Մօտ օրէն
Երկուշաբթի, Զորեքշաբթի եւ Ուրբաթ
Հեռախօս (818) 434-8118
միայն ժամադրութեամբ
Առաւօտեան ժամը 10-էն, կ.ե. ժամը 3**

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԵՌԳԻ ԸՆՍԱՐ)


ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՆՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ԵՆՈՒՉԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506



MOVING SALE !

Mission Liquor & Wines

 <p>Chivas Regal 12-Yr Scotch \$16.99 750ml \$29.99 1.75L</p>	 <p>Johnnie Walker Black Label \$19.99 750ml \$47.99 1.75L</p>	 <p>Johnnie Walker Blue Label \$129.99 750ml \$249.99 1.75L</p>	 <p>Grey Goose Vodka 750ml \$20.99 Cazadores Reposado Tequila 750ml</p>
 <p>Belvedere Vodka 750ml \$20.99</p>	 <p>Hennessy Cognac 750ml \$20.99 vs \$30.99 VSOP</p>	 <p>Russian Standard Vodka 750ml \$11.99</p>	 <p>Absolut Vodka \$13.99 750ml \$24.99 1.75L</p>
 <p>Patron Silver Tequila 750ml \$33.99</p>	 <p>Hennessy XO Cognac 750ml \$96.99</p>	 <p>Courvoisier XO Cognac 750ml \$69.99</p>	 <p>Courvoisier Cognac 750ml \$17.99 vs \$24.99 VSOP</p>
 <p>Dewar's 12-Yr Scotch 750ml \$16.99</p>	 <p>Don Julio 1942 Tequila 750ml \$89.99</p>	 <p>Cristall Vodka 750ml \$9.99</p>	 <p>Imperia Russian Vodka 750ml \$17.99</p>
 <p>Ciroc Vodka 750ml \$19.99 Level Vodka 750ml</p>	 <p>Johnnie Walker Red Label 750ml \$13.99</p>	 <p>Skyy Vodka \$10.99 750ml \$20.99 1.75L</p>	 <p>Stolichnaya Vodka 1.75L \$18.99</p>
 <p>Czar's Gold Vodka 750ml \$14.99</p>	 <p>Louis XI XO Brandy 750ml \$14.99</p>	 <p>Don Julio Añejo Tequila 750ml \$34.99</p>	 <p>Ora Vodka 750ml \$10.49</p>
 <p>Ketel One Vodka 750ml \$17.49</p>	 <p>Johnnie Walker Green Label 750ml \$29.99 Gold Label 750ml \$49.99</p>	 <p>El Massaya Arak 750ml \$19.99</p>	 <p>Wines Assorted 750ml \$1.89</p>

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104

Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500

Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm

www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 10/14/07 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards
All items are 750ml in size unless specified.

ՇՈՒՆՆԵՐ



ԳՈՀԱՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ (ԾՆԵԱԼ ԴԱԻԻԹԵԱՆ)

Հանգուցեալ ԳՈՀԱՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ (ծնեալ Դաւիթեան) մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Հոկտեմբեր, 2007, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ՝ 2215 E. Colorado Blvd.:

Սգակիրներ՝
Ամուսինը՝ Ստեփան Գասապեան
Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Թովմաս եւ Ալին Եթերեան եւ զաւակները՝ Գարին եւ Լորէնի
Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Զարիկ Դաւիթեան
Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Շահէն եւ Անուշ Զէյթունցեան եւ զաւակները Լիլիկ եւ Հելեն:
Խնամին՝ այրի Տիկ. Թագուհի Եթերեան եւ համայն Գասապեան, Դաւիթեան, Զէյթունցեան, Եթէրեան, Օճախեան, Մաթոսեան, Աղամեան, Գիպարեան ընտանիքները, բարեկամներն ու հարազատները:
Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեսուրճ պիտի մատուցուի եկեղեցւոյ սրահին մէջ:

«ԶԻՆԱՍՐՈՂ ՅՈՒՇԵՐ»

Շարունակուած էջ 15-էն

ինտուէ, կը գտնէ հայրենակիցներ, ծանօթանալու համար անոնց կենցաղին ու ազգային կեանքին:

Գրքին վերջին մասը յատկացուած է Լոս Անճելոսի իր գործունէութեան: Որպէս մարզանքի ուսուցիչ կը պաշտօնավարէ Հ.Բ.Լ.Մ. ի Մանուկեան վարժարանի մէջ (այժմ Մանուկեան Տէմիթեան Երկրորդական Վարժարան) 1982էն մինչեւ 1989, իր հանգստեան կոչուելը: Մարզանքի դաստերու կողքին կը կազմակերպէ պասքէթպոլի խումբեր: Կը կազմակերպէ երկու մարզահանդէս 1983ին եւ 1986ին: Երկրորդը կայացաւ նախագահութեամբ Գալիֆորնիոյ կառավարիչ ճորճ

Տէօքմէճեանի եւ Հ.Բ.Լ.Մ. ի մծաշուք նախագահ Ալէք Մանուկեանի: Ես անձամբ ներկայ եղայ այս մարզահանդէսին եւ հաճոյքով կը յայտնեմ թէ միջազգային մակարդակով խոշոր ձեռնարկ էր թէ յայտագրի ճոխութեամբ եւ թէ օրինակելի կարգապահութեամբ:

Որպէս ուսուցիչ իր պաշտօնավարութեան ընթացքին ի յայտ կու գայ մանկավարժի իր ունակութիւնը: Կը սիրուի ու կը յարգուի աշակերտութեան, ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան կողմէ:

Գեղատիպ, 470 էջով այս հատորը գրուած մաքուր, ինքնուրուի հայերէնով եւ հայրենասիրական ջերմ շունչով, կը կարդացուի հաճոյքով եւ հետաքրքրութեամբ:

ԳԱՐԼՈ ԿՈՆՏՈՆԻ «ՎԵՆԵՏԻԿԻ ԵՐԿՐՈՐԵԱԿՆԵՐԸ»

Շարունակուած էջ 8-էն

ունեցած զգացական կապերով ներկայ դերին մէջ, դարձաւ ապրումներով լեցուն հետաքրքրաշարժ եւ համակրելի ներկայութիւն: Յարուած Ֆաքճեան տակաւ կը շրջանցէ իր կազմաւորուող դերասանի փորձառական խաղաչը: Նկատառելին՝ ան սկսած է կերտել իր բեմական անձնական նկարագիրը, որ նուազ արժանիք մը չէ: Ան կարեւոր ուժ մըն է մեր գաղութի թատերական կեանքին մէջ:

Չանէթթօն եւ Թօնինօն՝ Երկուրեակները մարմնաւորող Արի Լիպարիտեան, մեր մեծագոյն անակնկալն էր այս թատերախաղին մէջ:

Ան ստանձնած էր նկարագրով, մտային կարողութիւններով եւ կենցաղային շարժումներով գիրար հակասող եւ սակայն ֆիզիքայէս անթերի նմանութեամբ նոյն անձերը մարմնաւորող գլխաւոր երկու դերեր: Լիպարիտեան ըլլայ չափազանցութիւններու՝ անկապ, ապուշ, անպատասխանատու խօսակցութիւն եւ գերզանցապէս ծիծաղելի դէմքի ծամածրութիւններով՝ մտաբերել իր թունաւորման տեսարանը, ըլլայ՝ իբրեւ ներկայանալի, հաւասարակշռուած դատողութեամբ, հաւատարիմ եւ կնամեծար անձնաւորութիւն՝ յիշեցէք գոհարեղէններու տեսարանը՝ յաջողապէս մարմնաւորեց Չանէթթօն եւ Թօնինօն՝ որոնք պիտի մնան հանդիսատեսներուն յիշողութեան մէջ: Լիպարիտեան, շատ յաճախ ենթակալ դարձաւ արուեստական չափազանցութիւններու յատկապէս թունաւորման պահուն, մահամերձի եռուն ցատկուտութեանը: Վստահաբար, միջնադարեան առումով, աւելի շեշտուած պէտք էր եղած ըլլային անոնք: Բեմադրիչ Սաթամեան, համեմատաբար մեղմացուցած պէտք էր ըլլար զանոնք կարգ մը կրճատումներով: Արի Լիպարիտեան՝ տրուած արժանաւոր խոստում մըն է մեր գաղութի թատերական կեանքին:

Նոյնքան ուշագրաւ ներկայութիւն էր սիրոյ ճամբուն՝ կեղծիքի, սուտի, չարախօսութեան, չար նախանձի ու մարդասպանութեան տիպարի՝ Բանքրացիոյ դժուարին դերին մէջ բեմական վարժութիւն ձեռք ձգած Արամ Մուրադեան:

Մուրադեան, թող որ երգիծական թատերգութիւններու մէջ աննշան երեւոյթ է վերոնշեալ վարքագիծերու շեշտաւորումը՝ յաջողեցաւ իր վրայ հրաւիրել ներկայ հանդիսատեսներու ուշադրութիւնը: Ամբողջ ներկայացման տեւողութեան, Արամ Մուրադեան յա-

ջողեցաւ լաւապէս պահել իր այդ ժխտական վարքագիծը: Ան կոչուած պիտի մնայ կարեւոր օղակ մը կապուած մեր բեմի:

Պէտք է յիշել դերով ուշադրութեան արժանի՝ շնորհալի դերակատարուհի Մարալ Գոճեան կրցաւ ամբողջական բնականութեամբ մարմնաւորել վայելչագեղ, պատուախնդիր եւ հաւատարիմ ազնուականուհի մը տիպարը:

Ֆլօրինտոյի դերով՝ խօստունանալից Տիգրան Ալթունեան, Լէլիոյի դերով Արէք Քուրեան, Ծառայի, Բեռնակիրի, պահակներու դերերով՝ Ռաճըր Թոմաս, Գրիգոր Սիմոնեան եւ Սազո Պետրսեան լուռ ու պարզ, սակայն համակրելի ներկայութիւն ու շարժում դարձան բեմին վրայ, մեծապէս նպաստելով թատերախաղի յաջողութեան:

«Վենետիկի Երկուրեակները» թատերախաղին իրենց մասնակցութիւնը բերին եւ «Արտաւազ»-ի երէցներէն մի քանին, ինչպէս՝ Տօքթ. Պալանձոնի դերով՝ Յարութիւն Թումայեան, Ռատիկանի դերով Ալէքս Խուրշիտեան եւ Պրիկեղլայի դերով՝ Հրաչ Աճէմեան, որոնց ներկայութիւնը կը հաստատէր այլապէս յաջող սերնդափոխութեան մը գովելի իրողութիւնը:

Յարութիւն Թումայեան իրողապէս իր մարմնաւորած տիպարին յանցաւորի առողանութեամբ, դիմագծային խորը կնճրատուններով եւ հոգեկան դառն վերիվայրումներով, լաւագոյն մարմնաւորեց Տօքթ. Պալանձոնի էութիւնը:

Ռատիկանի յաջող դերով՝ ծանօթ դերասան Ալէքս Խուրշիտեան, թող որ կարճ, այլ համոզիչ խաղարկութեամբ յաջողեցաւ պատուել Գարլօ Կոլտոնի դարաշրջանի նեխտած ընկերային համակարգը:

Եւ վերջապէս Պրիկեղլայի դերին մէջ, գաղութի ծանօթ դերասաններէն Հրաչ Աճէմեան, ինչպէս միշտ, հոս եւս մարմնաւորեց հաւատարիմ, հանդարտաբարոյ եւ արդարամիտ ծառայի հաճելի տիպարը, որ իր բարի վկայութեամբ պիտի քակէր «Վենետիկի Երկուրեակներ»-ու առեղծուածային հանգոյցը:

Ծափահարելի ներկայացում մը, արդարեւ, որուն համար պիտի արժէր շնորհաւորել բոլոր դերակատար երիտասարդ-երիտասարդուհիները: Մեր թելադրութիւնը պիտի ըլլար, անտարակոյս, շող մ'առաւել նուիրում, մասամբ մը յաւելեալ բծախնդրութիւն եւ միշտ հետեւողական աշխատանք՝ կարենալ նուաճելու համար ցանկացուած իրենց պարագային հասանելի նոր բարձրունքներ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՎ

Շարունակուած էջ 16-էն

Փրոֆ. Պէրի Սթրաուտ, Փրոֆ. Փաթրիկ Սուփէս եւ ուրիշներ:

Կլէնտէյլի տեղական կազմակերպիչ մարմին անդամներն են՝ Տօքթ. Յարութիւն Մադրեան (Ատենայպէս), Արժ. Տ. Արշակ Աւ. Քահնյ. Խաչատուրեան, Տօքթ. Յովհաննէս Գուլաք Աւետիքեան, Պօղոս Գուբելեան, Ալին Մելիքեան, Տօքթ. Նուպար Միսի-Գէորգեան, Օննիկ Պալարմեան, Գէորգ Պետիկեան, Սարգիս Վա-

հագն, Տօքթ. Գէորգ Քէշիշեան եւ Փրոֆ. Օշին Քէշիշեան:

Կլէնտէյլ Քոլէճի հասցէն է . 1500 N. Verdugo Rd. Glendale, CA 91208 Tel. (818) 240-1000. (Մուտքը Mountain փողոցէն):

Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի նախագահն է Փրոֆ. Գէորգ Բրուտեան (Հայաստան, համահայրազանքը՝ Փրոֆ. Պէրի Սթրաուտ (Քալիֆորնիոյ համալսարան) եւ Էւան-Խելոս Մուցոփուլոս (Յունաստան)):

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ Վ Ի Գ Ա Կ Ա Յ Ա Ն ՈՒ Թ Ի Ի Ն Ի նպաստ

Նոր Հաճնոյ Մեծն Մուրաւ դպրոցին

Մեծ Պարգեւ՝ 2008 Lexus ES 350
Ա. Պարգեւ՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
Բ. Պարգեւ՝ Laptop Համակարգիչ
Գ. Պարգեւ՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ին
Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճըն Բաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ARMENIAN ASSEMBLY OF AMERICA

ANNIVERSARY



GALA

B A N Q U E T

THE ARMENIAN ASSEMBLY OF AMERICA'S

35TH ANNIVERSARY GALA BANQUET

and the

30TH ANNIVERSARY OF THE TERJENIAN-THOMAS ASSEMBLY INTERNSHIP PROGRAM

Distinguished Humanitarian Award Tribute Recipient

MRS. RAKEL DINK

On Behalf of Her Late Husband

HRANT DINK

November 2-3, 2007

THE BEVERLY HILTON HOTEL, BEVERLY HILLS, CALIFORNIA



RSVP by October 26, 2007

Western Office (626) 577-0025 • National Headquarters (202) 393-3434 x 245

TO REGISTER VIA OUR WEB SITE, VISIT www.aainc.org